Հավելված N 1
ՀՀ կառավարության 2021 թվականի
սեպտեմբերի 2-ի N 1430-Ա որոշման

ԲԻԶՆԵՍ ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԽՆՁՈՐԻ ԵՎ ԿԵՌԱՍԻ ԻՆՏԵՆՍԻՎ ԱՅԳԻՆԵՐԻ և ՍԱՌՆԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆՄԱՆ

Բիզնես ծրագիրը պատրաստվել է «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոնի մասնագետների կողմից

Կոնտակտային անձ՝ Մարիամ Չիբուխչյան,
Կառավարման խորհրդատվության բաժնի ղեկավար

ՀՀ, 0002, Երևան, Եկմալյան փողոց 6

+374 10 574778 | +374 77 574778 | +374 95 574778 | +374 99 574778

www.bsc.am

bsc@bsc.am

https://www.facebook.com/BSCBusinessSupportCenter

https://www.linkedin.com/company/bsc-business-support-center/

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԱՄՓՈՓ ՆԱԽԱԲԱՆ 4
2. ԽՆՁՈՐԻ ԵՎ ԿԵՌԱՍԻ ՇՈՒԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ 11
   2.1. Խնձորի եվ կեռասի համաշխարհային շուկան 11
   2.2. Խնձորի և կեռասի հայաստանյան շուկան 20
   2.3. Խնձորի և կեռասի ռուսաստանյան շուկան 30
3. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՊԼԱՆ 35
   3.1. Խնձորի և կեռասի ինտենսիվ այգիներ 36
   3.3. Աշխատակազմ 41
4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԼԱՆ 46
   4.1. Հիմնական ենթադրություններ 46
   4.2. Ներդրումային պլան 47
   4.3. Վաճառքի ծավալներ և սեզոնայնություն 50
   4.4. Ծախսեր 51
   4.5. Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 52
   4.6. Դրամական հոսքերի մասին հաշվետվություն. 2021-2031 թթ.. 55
   4.7. Ֆինանսական ամփոփ ցուցանիշներ 58
5. ՌԻԿՍԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ 60

1. ԱՄՓՈՓ ՆԱԽԱԲԱՆ

Ծրագիրը ներկայացում է ՀՀ-ում խնձորի և կեռասի ինտենսիվ այգիների հիմնման ու դրանցից ստացված բերքի պահպանման ու հետագա իրացման կազմակերպման համար նախատեսված սառնարանային տնտեսության կառուցման աշխատանքների պլանավորումն ու ֆինանսական իրագործելիության

Ծրագիրը նախաձեռնվել է «ԷՄ ԷՌ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ կողմից: Այգետնկումն ու սառնարանային տնտեսության կառուցումը ընկերությունը պլանավորում է իրականացնել ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքում գտնվող 97.151 հա հողատարածքի վրա, որից 90.19 հա հողատարածքը վարձակալված է: Տեղի ընտրությունը պայմանավորված է եղել ոչ միայն տարածքի առկայությամբ, այլև բարենպաստ կլիմակական պայմաններով, աշխարհագրական դիրքի հարմարությամբ, ինչպես նաև նախատեսվող բերքի ստացման համար հողի բարենպաստ որակական հատկանիշներով:

Ծրագրով նախատեսվում է, որ այգու տարածքը կլինի ընդհանուր 70 հա, որից 60 հեկտարը խնձորի, իսկ 10 հեկտարը՝ կեռասի աճեցման համար: Սառնարանային տնտեսությունը կլինի այգուն հարակից տարածքում, ընդհանուր մոտ 4350 քմ, 3000 տոննա բերքի պահպանման համար: Տարածքի մնացած հատվածը կծառայի այգու ու սառնարանային տնտեսության գործունեության սպասարկման համար:

Ծրագրի մեկնարկը նախատեսվում է 2021 թվականին: Առաջին փուլում կկազմակերպվեն հողի նախապատրաստման, կաթիլային ոռոգման ու հակակարկտային համակարգի անցկացման աշխատանքները: Երկրորդ փուլում՝ 2022 թվականի գարնանը, կներմուծվեն տնկիները և կկազմակերպեն ծառատնկման աշխատանքները: Տնկիների, սառնարանային տնտեսության և այգու հետագա շահագործման ու սպասարկման համար անհրաժեշտ որոշ սարքավորումների ձեռքբերումը պլանավորվում է կազմակերպել արտասահմանից (հիմնականում Իտալիա):

Սառնարանային տնտեսության կառուցման աշխատանքները նախատեսվում է սկսել 2022 թվականին, որ 2023 թվականին այն արդեն բերքի ծավալների մեծացմանը զուգահեռ պատրաստ լինի սպասարկման:

Կանխատեսվում է, որ խնձորի այգու համար հենց տնկման առաջին տարում կստացվի որոշակի քանակությամբ բերք, իսկ կեռասի բերաքատվությունը կլինի տնկման երկրորդ տարվանից:

Ապրանքի 95%-ը կարտահանվի Ռուսաստանի Դաշնություն, իսկ 5%-ը կվաճառվի տեղական շուկայում:

Ընկերությունն արդեն բանակցությունների մեջ է ռուսական առաջատար առևտրի կենտրոնների հետ ապրանքի արդյունավետ ու անխափան իրացման կազմակերպման նպատակով:

Շուկա

Շուկայի հետազոտությունը տարվել է երեք ուղղություններով՝

- Խնձորի ու կեռասի համաշխարհային շուկայի, զարգացման միտումների ուսումնասիրություն;
- Տեղական շուկայի ուսումնասիրություն՝ առաջարկ, սպառում, մրցակիցներ ձևաչափով;
- Ռուսական շուկայի ուսումնասիրություն՝ սպառման հնարավորությունների գնահատման նպատակով:

Համաշխարհային շուկայի ուսումնասիրությունը կատարվել է այս ոլորտի գլոբալ զարգացումը և զարգացման հիմնական միտումները հասկանալու համար: Ինչ վերաբերում է տեղական շուկային, ուսումնասիրվել է խնձորի և կեռասի հայաստանյան շուկան, գնահատվել է առաջարկի, պահանջարկի, սպառման հետ կապված առկա իրավիճակը, հնարավոր մրցակցությունը այս ոլորտում և հնարավորությունները: Ռուսաստանյան շուկայի ուսումնասիրությունը, ինչպես արդեն նշեցինք, տարվել է շուկա մուտքի հնարավորությունների գնահատման տեսանկյունից՝ դիտարկելով այն որպես հիմնական թիրախային շուկա:

ՀՀ-ում շուկայի հետազատություն արդյունքները ցույց են տալիս, որ երկրում բավականին բարձր է պտղի և հատապտղի ինքնաբավության մակարդակը: Ուստի

արտադրության ծավալների ավելացումը կնպաստի արտահանման և վերամշակված արտադրանքի ծավալների ավելացմանը:

Ինչ վերաբերում է ռուսական շուկային, ապա շուկայի հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ թե՛ խնձորի, թե՛ կեռասի մասով Ռուսաստանի ներքին շուկայի սպառումն ապահովելու տեսանկյունից երկրում արտադրվող քանակը դեռ շատ քիչ է: Այդ է պատճառը, որ երկրում սպառվող խնձորի և կեռասի քանակության զգալի մասը ներկրվում է: Ռուսաստանյան շուկայի հետազոտության հիման վրա կարող ենք ասել, որ ոլորտի «առաջարկող» հնարավորությունները բավականին արդյունավետ են դրանց հետ կապված մարտահրավերները ընդունելու տեսանկյունից: Բացի դրանից, ի տարբերություն Ռուսաստան ներմուծող այլ երկրների, Հայաստանը որպես ԵԱՏՄ անդամակցող երկիր ունի լուրջ մրցակցային առավելություններ ընդհանուր մաքսային սահմանի առումով:

Ծրագրի իրականացման մասին

Տվյալ բիզնես ծրագիրը մշակվել է ծրագրի ֆինանսատնտեսական հիմնավորման և իրագործելիության գնահատման նպատակով: Բիզնես ծրագրի կանխատեսումները կատարվել են տասնմեկ տարի ժամկետով՝ հաշվի առնելով ծրագրի առանձնահատկությունները և ներդրումների հետգնման ժամկետի մասը:

Բիզնես ծրագրում հաշվարկների արտարժույթն է ՀՀ դրամը: Հաշվարկներում եկամտի և որոշ ծախսային հոդվածների համար կիրառվել է որոշակի աճի տոկոս (2%) երկրում մակրոտնտեսական փոփոխությունների հնարավոր ազեցությունը ծրագրի վրա արտացոլելու նպատակով:

Բիզնես ծրագրում հիմք ընդունված հիմնական ցուցանիշներն են.

ՀՈԴՎԱԾ	ՑՈՒՑԱՆԻՇ
Ծրագրի սկիզբ	2021 թվական
Կանխատեսումների հորիզոն	11 տարի
Այգետնկման աշխատանքների սկիզբ	2021 թվական
Սառնարանային տնտեսության հիմնման աշխատանքների սկիզբ	2022 թվական
Կանխատեսումների սկիզբ	2021 թվական
Խնձորի բերքատվություն	2-րդ տարվանից սկսած

Կեռասի բերքատվություն	3-րդ տարվանից սկսած
Հիմնական արժույթ	ՀՀԴ
USD / ՀՀ դրամ	533.84
EURO/ՀՀ դրամ	626.73
RUB/ՀՀ դրամ	6.99
Ինֆլացիա և բնական աճ (տարեկան)	5%

Եկամտի և ծախսային հոդվածների, ինչպես նաև ներդրումների կանխատեսումներն արվել են հաշվի առնելով տեղական շուկայում նմանատիպ այգիների շահագործման փորձ ունեցող մասնագետների փորձն ու կարծիքները, արտասահմանից կամ տեղական շուկայից ձեռք բերվող սարքավորումների, գործիքների ու այգու խնամքի համար անհրաժեշտ այլ նյութերի դեպքում՝ համապատասխան շուկայական գները:

Ֆինանսական և այլ ցուցանիշներ

Հետևյալ աղյուսակներում ներկայացված են այգու և սառնարանային տնտեսության համար կանխատեսված հիմնական ֆինանսական ցուցանիշները.

Հիմնական ֆինանսական ցուցանիշների կանխատեսում ընկերության համար

ՀՈԴՎԱԾ	ՑՈՒՑԱՆԻՇ
Նախագծի սկիզբ	2021 թվական
Կանխատեսումների հորիզոն	11 տարի
Ընդամենը ներդրումներ և շրջանառու միջոցներ	3,243,610,544
Ընդամենը հասույթ (1-11 տարիներ)	15,370,478,357
Ընդամենը ծախսեր (1-11 տարիներ)	6,385,008,379
Նախագծի զուտ շահույթ (1-11 տարիներ)	7,843,400,275
Զուտ շահութաբերություն	62.5%
Շահառուներից ակնկալվող գումար	1,222,000,000
Դրամական միջոցների մնացորդը ժամանակաշրջանի վերջում	7,665,803,394
Արդյունավետության ցուցանիշները ներդրողի համար	
Տնտեսական շահութաբերության ցուցանիշ (IRR)	18.5%
Հետգնման տնտեսական ժամանակահատված	7.1

Ծրագրի ֆինանսական մոդելի վերլուծությունը տարվել է սցենարային տարբերակով: Դիտարկվել են սցենարներ կապված վաճառքի գների ու բերքատվության ցուցանիշների հնարավոր փոփոխության հետ կապված, ինչպես

նաև ծրագրի ղեկավարների համար որպես որոշման այլընտրանքային տարբերակ դիտարվել է խնձորի ու կեռասի համար այգու տարածությունների բաշխվածության փոփոխության հնարավոր սցենարը:

Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ ի տարբերություն բերքատվության ցուցանիշների, ծրագրի արդյունավետության ցուցանիշները բավականին զգայուն են վաճառքի գնի փոփոխության նկատմամբ: Եթե բերքատվության կանխատեսվող կանխատեսվող ցուցանիշների 1% փոփոխությունը բերում է ծրագրի վերջնական զուտ շահույթի ցուցանիշի մոտ 2% փոփոխության, ապա գնի դեպքում համապատասխանաբար այդ ազդեցությունը կլինի մոտ 3%:

Սա նշանակում է, որ գնի շուրջ բանակցությունների ժամանակ ընկերությունը պետք է տանի բավականին լուրջ մտածված ու զգույշ քաղաքականությունը՝ առավելագույնս հաշվի առնելով գնի վրա ազդող հնարավոր գործոնների ազդեցությունը:

Ինչ վերաբերում է այգու տարածքի բաշխավածությանը, ապա պատկերը ցույց է տալիս, որ եթե կեռասի այգու տարածությունը մեծանա խնձորի այգու տարածության հաշվին, ապա ծրագրի արդյունավետությունը ավելի բարձր կլինի և դա կարող է թույլ տալ մեղմել նաև վաճառքի գնի նվազման հնարավոր բացասական ազդեցությունը:

Ծրագրից ակնկալվող արդյունքները և դրա իրականացման հետ կապված հնարավորությունները

Այս ծրագիրը կարող է համարվել խոշոր ներդրումային ծրագիր՝ հաշվի առնելով Հայաստանի տնտեսության կառուցվածքը, ինչպես նաև գյուղատնտեսության ու երկրից արտահանման խթանման առումով ներդրվող ջանքերը: Ծրագրի իրականացումը ենթադրում է մի շարք հնարավորություններ տնտեսության տարբեր ոլորտների համար.

- Այն կարող է համարվել հաջող ծրագիր՝ օրինակ ծառայելով այլ ներդրողների համար Հայաստանի մարզերում գյուղատնտեսության, հատկապես պտղաբուծության արտադրական հզորություններ հիմնելու համար:
- Ծրագրի իրականացումը դրական ազդեցություն կունենա Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման վրա: Ծրագրի իրականացման արդյունքում կձևավորվեն նոր աշխատատեղեր Եղվարդի և հարակից համայնքներում՝ նպաստելով զբաղվածության ապահովմանը: Ծրագրի իրականացման արդյունքում կստեղվեն հարյուրից ավելի սեզոնային ու 20-ից ավելի մշտական աշխատատեղեր:
- Կնպաստի Հայաստանում արտադրված ապրանքների արտահանմանը՝ լրացուցիչ խթան հանդիսանալով արտահանման ծավալների ավելացման գործում:
- Կկառուցվի եզակի ու նորագույն լուծումներով սառնարանային տնտեսություն, որը հնարավորության դեպքում կարող է բերքի պահպանման ծառայություններ մատուցել այլ տնտեսվարողների նույնպես:
- Համագործակցություն կլինի ռուսական հայտնի առևտրային կենտրոնների հետ, ինչը հետագայում կարող է բարենպաստ պայմաններ ստեղծել ինչպես այլ արտադրողների բերքի, այնպես էլ այլ ապրանքների իրացման կազմակերպման համար:
- Ծրագրի հաջող իրականացումից կարող են օգտվել նաև ոլորտային կրթական հաստատությունները՝ ուսանողների համար ուսումնական ծրագրերի համատեղ իրականացման առումով: Այգին հագեցած է լինելու նորարարական ագրոտեխնոլոգիական հնարավորություններով ու լուծումներով, ինչը ագրո ոլորտի ապագա ինժեներների և հենց գյուղատնտեսների համար լավ փորձի հիմք կարող է լինել:
- Կձևավորվի կորպորատիվ կառավարման օրինակելի մշակույթ արտադրության, արտահանման և մատակարարների հետ աշխատանքների ոլորտներում:

Ծրագրի իրականացման ժամանակ նախատեսվում է, որ ընկերությունը կարող է օգտվել ՀՀ կառավարության կողմից իրականացվող հետևյալ խթանող միջոցառումներից ու հարկային արտոնություններից.

- Քանի որ հարկային օրենսդրության դրույթների հիման վրա կիրառվում է, թե՛ ապրանքներից և սարքավորումներից, մաքսային մարմինների կողմից հաշվարկվող ավելացված արժեքի հարկի վճարման ժամկետը հետաձգում կամ ազատում և թե՛ արդեն իսկ ներմուծման ժամանակ սահմանին

վճարված ԱԱՀ հետ վերադաձի արդյունավետ գործիքակազմերը՝ ընկերությունը պլանավորում է օգտվել պետության կողմից տրամադրված այդ հնարավորություններից և իրականացնել դրամական հոսքերի տնտեսում:

- Հաշվի առնելով այն փաստը, որ ընկերության արտադրանքը գրեթե ամբողջովին նախատեսված է արտահանման համար, այսինքն որ ՀՀ հարկային օրենսգրքի՝ 65-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ընկերությունը աշխատելու է ԱԱՀ 0% դրույքաչափով:

- Վարկավորումը կազմակերպել ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 29-ի N 361-Լ որոշման[1] համաձայն հաստատված «Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգուների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության» ծրագրի շրջանակներում, որի համաձայն ընկերությունը կօգտվի վարկի տոկոսդրույքի սուբսիդավորման և վարկի մայր գումարի արտոնյալ ժամկետի հնարավորությունից: ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 175-Լ որոշմամբ[2] մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը, տրամադրվող վարկերը հասանելի կլինեն՝ 0 % տոկոսադրույքով, 8 տարի մարման և 5 տարի արտոնյալ ժամկետներով:

[1] ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 29-ի N 361-Լ որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152180
[2] ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 175-Լ որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=149906

2. ԽՆՁՈՐԻ ԵՎ ԿԵՌԱՍԻ ՇՈՒԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

2.1. Խնձորի եվ կեռասի համաշխարհային շուկան

2.1.1. Խնձորի համաշխարհային շուկան[3]

Մոտ չորս տարվա նվազումից հետո խնձորի համաշխարհային շուկան վերջապես աճ գրանցեց՝ 2019 թվականին հասնելով 78.8 մլրդ ԱՄՆ դոլարի: Վերջին 12 տարվա ընթացքում խնձորի արժեքը աճել է տարեկան 2.1%-ով: Աճի առավել ակնառու տեմպը գրանցվել է 2014-ին՝ տարեկան 16% աճով: Համաշխարհային սպառումն իր գագաթնակետին է հասել 2019 թ.-ին և ակնկալվում է, որ այդ աճը կպահպանվի դեռ երկար տարիներ:

2019 թվականին թարմ խնձորը աշխարհի 450-րդ ամենաշատ վաճառվող ապրանքն էր: Խնձորի առևտուրը կազմում է ընդհանուր համաշխարհային առևտրի 0,039% -ը[4]:

Արտադրությունը 2007-2019 թվականներին

2016 թվականից սկսած 2019 թվականին առաջին անգամ խնձորի արտադրությունն աճեց 6.7% -ով և հասավ 84 մլն տոննայի՝ այսպիսով ավարտելով երկամյա անկման միտումը: Արտադրության ընդհանուր ծավալը 2007 թվականից մինչև 2019 թվականը աճել է տարեկան միջինում 2,1%-ով: Աճի տեմպերն առավել ցայտուն էին 2011 թվականին՝ տարեցտարի աճելով 8.1%: Դիտարկվող ժամանակահատվածում համաշխարհային արտադրությունը 2014 թվականին հասել է իր առավելագույն ծավալին՝ 85 միլիոն տոննա: Արտադրության առումով ընդհանուր դրական միտումը հիմնականում պայմանավորված էր բերքահավաքի տարածքի համախառն աճով և բերքատվության ցուցանիշների թեթև աճով:

[3] https://fruitgrowersnews.com/news/global-apple-market-reached-78m-set-to-continue-moderate-growth/
[4] https://oec.world/en/profile/hs92/apples-fresh

Արտադրությունը ըստ երկրների

Չինաստանը (41 մլն տոննա) շարունակում է մնալ համաշխարհային շուկայում խնձոր արտադրող ամենաառաջատար երկիրը՝ ապահովելով խնձորի ընդհանուր ծավալի 49%-ը: Երկրորդ տեղում ԱՄՆ է՝ 4.7 մլն տոննայով, որին հաջորդում է Թուրքիան՝ 3 մլն տոննայով և 3.6% մասնաբաժնով:



[5]

2007-2019 թվականների ընթացքում ծավալների առումով Չինաստանում գրանցվել է 3.3% միջին տարեկան աճ: Մյուս առաջատար երկրները ունեցել են աճի հետևյալ ցուցանիշները. ԱՄՆ՝ 1.0% աճ տարեկան, Թուրքիա՝ 1.7% տարեկան աճ:

Մշակվող տարածությունը 2007-2019 թվականներին

2019 թվականին խնձորի մշակության ընդհանուր տարածությունը աճել է մինչև 5.1 մլն հա՝ նախորդ տարվա համեմատ աճելով մոտ 3.5%-ով: Դիտարկվող

[5] https://www.statista.com/statistics/279555/global-top-apple-producing-countries/

ժամանակահատվածում խնձորի մշակության տարածքը ամենաշատը եղել է 2015 թվականին՝ 5.2 մլն հա տարածքով: Սակայն 2016-2019 թվականների այդ թիվը թեթևակի նվազեց:

Բերքատվությունը 2007-2019 թվականներին

Խնձորի համաշխարհային միջին բերքատվությունը 2019 թվականին մեկ հեկտարի հաշվով կազմել է 17 տոննա՝ նախորդ տարվա համեմատ աճելով 3.1%-ով: 2007-2019 թվականների ընթացքում բերաքատվության ցուցանիշը աճել է տարեկան 1.4%-ով: Աճի միտումը դիտարկվող ժամանակահատվածի համար մնացել է համեմատաբար կայուն: Ամենաբարձր աճը եղել 2011 թվականին՝ 6.2% աճ նախորդ ժամանակահատվածի համեմատ:

Արտահանումը 2007-2019 թվականներին

2019 թվականին խնձորի համաշխարհային արտահանումը հասավ 8.2 մլն տոննայի՝ մնալով կայուն 2018 թվականի համեմատ: Արտահանման առավելագույն ցուցանիշը գրանցվել է 2015 թվականին՝ նախորդ տարվա համեմատ աճելով 11%-ով և հասնելով 9.3 մլն տոննայի: 2016-2019 թվականներին արտահանումը զարգացել է ավելի ցածր ցուցանիշով:

Արժեքային տեսանկյունից խնձորի արտահանումը նվազել է՝ 2019 թվականին հասնելով 7 մլրդ ԱՄՆ դոլարի: 2007-2019 թվականների ընթացքում խնձորի արտահանման արժեքը աճել է տարեկան միջինում 1.2%-ով: Նույն տրենդը պահպանվել է դիտարկվող ժամանակահատվածի համար՝ ունենալով որոշակի թեթև տատանումներ:

Արտահանումը ըստ երկրների

Խնձոր արտահանող երկրներ թոփ հնգյակը գլխավորում են **Լեհաստանը, Չինաստանը, Իտալիան, ԱՄՆ-ը և Չիլին**՝ ապահովելով խնձորի համաշխարհային արտահանման **ավելի քան 50%**-ը: Դրանցից հետո գալիս են **Հարավային Աֆրիկան, 464 հզր տոննա), Նոր Զելանդիան (432 հզր տոննա) և Ֆրանսիան (381 հզր տոննա)**՝ միասին կազմելով խնձորի համաշխարհային արտահանման **16%**-ը. **Թուրքիան**

(256 հզր տոննա), Մոլդովան (255 հզր տոննա), Սերբիան (217 հզր տոննա) և Բելգիան (195 հզր տոննա) ընդհանուր արտահանման **փոքր մասն** են կազմում:

2007-2019 թվականների ընթացքում այս մասով ամենամեծ աճը գրանցվել է Թուրքիայում:

Արժեքային տեսանկյունից 2019 թվականին ամենամեծ ցուցանիշ գրանցած երկրներն են եղել Չինաստանը (1.2 մլրդ ԱՄՆ դոլար), ԱՄՆ (962 մլն ԱՄՆ դոլար) և Իտալիան (841 մլն ԱՄՆ դոլար)՝ միասին կազմելով համաշխարհային արտահանման 44%-ը: Չիլին, Նոր Զելանդիան, Ֆրանսիան, Հարավային Աֆրիկան, Լեհաստանը, Սերբիան, Մոլդովան, Բելգիան և Թուրքիան միասին կազմում են 39%:

Արտահանման գներն ըստ երկրների

Խնձորի արտահանման միջին գինը 2019 թվականին կազմել է 853 ԱՄՆ դոլար տոննայի հաշվով՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 6.6%-ով: Խնձորի համաշխարհային արտահանման միջին գինն իր գագաթնակետին հասել է 2018 թվականին՝ տոննայի հաշվով կազմելով 913 ԱՄՆ դոլար, որից հետո հաջորդ տարում նվազել է:

Ըստ երկրների գները էականերոն տատանվում են. **ամենաբարձ գինը գրանցվել է Նոր Զելանդիայում (1,311 ԱՄՆ դոլար/տոննա), իսկ ամենացածրը՝ Թուրքիայում (350 ԱՄՆ դոլար/տոննա).**

2007 թվականից մինչև 2019 թվականը աճի ամենանշանավոր տեմպերը գրանցվել են Չինաստանի կողմից, մինչդեռ համաշխարհային մյուս առաջնորդներն աճի ավելի համեստ տեմպեր են ապրել:

Ներմուծումը 2007-2019 թվականներին

2019 թվականին խնձորի համաշխարհային ներմուծումը հասավ մինչև 8 մլն տոննայի: Աճի ամենամեծ տեմպը գրանցվել է 2015 թվականին՝ նախորդ տարվա համեմատ աճելով 14%-ով՝ ներմուծման ծավալները հասցնելով 9.7 մլն տոննայի: 2016-2019 թվականների ընթացքում խնձորի համաշխարհային ներմուծումը, այնուամենայնիվ, մնացել է ցածր ցուցանիշի վրա:

Արժեքային տեսանկյունից 2019 թվականին ներմուծումը կազմել է մոտ 7.2 մլրդ ԱՄՆ դոլար: 2007-2019 թվականների ընթացքում խնձորի ընդհանուր ներմուծման արժեքը աճել է տարեկան միջինում 1.6%:

Ներմուծումը ըստ երկրների

Ռուսաստանը (701 հզր տոննա) և Գերմանիան (603 հզր տոննա) 2019 թվականին միասին կազմել են խնձորի ներմուծման 16%-ը: Մեծ Բրիտանիան (342 հզր տոննա), Եգիպտոսը (297 հզր տոննա), Բանգլադեշը (252 հզր տոննա), Հնդկաստանը (250 հզր տոննա), Նիդերլանդերը (242 հզր տոննա), Բելառուսը (222 հզր տոննա), Վիետնամը (219 հզր տոննա), Իսպանիան (218 հզր տոննա), Կանադան (202 հզր տոննա) և Չինաստանը, Հոնգ Կոնգը (189 հզր տոննա) իրենց ցուցանիշներով հաջորդում են առաջատարներին:



2007 թվականից մինչև 2019 թվականը ներմուծող հիմնական երկրների շարքում Եգիպտոսն ունեցել է գնումների աճի առավել ուշագրավ տեմպը, մինչդեռ մյուս

համաշխարհային առաջնորդները ներմուծումն աճի ավելի համեստ տեմպեր է ունեցել:

Արժեքի տեսանկյունից խնձոր ներմուծող ամենամեծ շուկաները ամբողջ աշխարհում եղել են Գերմանիան (482 մլն ԱՄՆ դոլար), Մեծ Բրիտանիան (424 մլն ԱՄՆ դոլար) և Ռուսաստանը (394 մլն ԱՄՆ դոլար), որոնք միասին կազմում են համաշխարհային ներմուծման 18%-ը: Վիետնամը, Նիդեռլանդները, Հնդկաստանը, Չինաստանը, Հոնկոնգը, Կանադան, Բանգլադեշը, Իսպանիան, Եգիպտոսը և Բելառուսը որոշակիորեն հետ են մնացել ՝ միասին կազմելով հետագա 27%:

Ներմուծման գները ըստ երկրների

2019-ին խնձորի ներմուծման միջին գինը կազմել է 897 ԱՄՆ դոլար մեկ տոննայի հաշվով՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 1.6%-ով: Վերջին տասներկու տարվա ընթացքում այն աճել է տարեկան միջինում 1.2% տոկոսադրույքով: Աճի առավել կարևոր տեմպը գրանցվել է 2011 թվականին, երբ ներմուծման միջին գինն աճել է 13%-ով: Դիտարկվող ժամանակահատվածում ներմուծման միջին գները հասել են առավելագույն ցուցանիշի՝ 1 տոննայի համար 911 դոլար 2018-ին, իսկ հաջորդ տարի արդեն նվազել են:

Գները նկատելիորեն տատանվում էին ըստ երկրների. **ամենաբարձր գինն ունեցող երկիրը եղել է Վիետնամը (1 տոննայի հաշվով 1608 ԱՄՆ դոլար), իսկ Բելառուսը (տոննան 285 ԱՄՆ դոլար)՝ ամենացածրը:**

2007-ից 2019 թվականներին Վիետնամը գների առումով հասել է աճի առավել ուշագրավ տեմպի, մինչդեռ համաշխարհային մյուս առաջնորդներն աճի ավելի համեստ տեմպեր են ունեցել:

Սպառումը ըստ երկրների

Բանանից հետո խնձորը սպառողների շրջանում երկրորդ ամենացանկալի միրգն է: Սպառողները, որպես այդպիսին գիտեն դրա օգտակարության մասին, ինչը և նպաստում է սպառման ծավալների մշտական աճին: Համաշխարհային հայտնի Fresh Trends պորտալի կողմից անցկացված հարցման արդյունքները ցույց են տալիս, որ հարցվողների 88%-ը խնձորն օգտագործում է որպես թեթև նախաճաշի

տարբերակ, 31%-ը օգտագործում է այս քաղցր, փխրուն միրգը որպես այլ ուտեստների բաղադրիչ, հարցվողների 28%-ի կողմից այն օգտագործվում է որպես աղանդեր սնվելուց հետո: Դրանք հայտնի էին նաև աղցաններում, կողմնակի ուտեստներում և նախուտեստներում[6]:

Սպառողների կողմից խնձորի օգտագործման տարբերակներ

Որպես թեթև նախաճաշ	88%
Որպես բաղադրիչ	31%
Որպես աղանդեր	28%
Որպես սալաթ	15%
Որպես կողմնակի ուտեստ	13%
Որպես նախուտեստ	8%
Որպես հիմնական ուտեստ	6%

Չինաստանը (40 միլիոն տոննա) շարունակում է մնալ աշխարհում խնձոր սպառող ամենամեծ երկիրը՝ կազմելով ընդհանուր ծավալի մոտ 48%-ը: Ավելին, Չինաստանում խնձորի սպառումը տասն անգամ գերազանցել է երկրորդ խոշոր սպառողի՝ **ԱՄՆ-ի (4 միլիոն տոննա)** արձանագրած ցուցանիշները: **Թուրքիան (2.7 մլն տոննա)** ընդհանուր սպառման ցուցանիշով 3-րդ տեղում է՝ 3,3% բաժնեմասով:

2007-2019 թվականների ընթացքում Չինաստանում խնձորի սպառումը միջինում աճել է տարեկան 3,4%-ով: Մյուս երկրներում միջին տարեկան աճը կազմել է՝ ԱՄՆ-ում տարեկան 0,7%, Թուրքիայում տարեկան 0,9%:

Արժեքային առումով, շուկան կրկին գլխավորում է Չինաստանը (44,9 մլրդ ԱՄՆ դոլար): Երկրորդ տեղում ԱՄՆ-ն է (4.6 մլրդ ԱՄՆ դոլար): Դրան հաջորդում է Ֆրանսիան:

2019 թվականին մեկ շնչի հաշվով խնձորի ամենաբարձր սպառման մակարդակ ունեցող երկրներն էին **Լեհաստանը (45 կգ մեկ շնչի հաշվով), Թուրքիան (33 կգ մեկ շնչի հաշվով) և Իրանը (33 կգ մեկ շնչի հաշվով)**:

[6] https://www.thepacker.com/markets/fruit/2020-fresh-trends-apple-purchase-statistics

2.1.2. Կեռասի համաշխարհային շուկան

Այս պահին կեռասի մատակարարման ծավալները քիչ են, և շուկայում մեծ պահանջարկ կա: Մատակարարումը կրճատվել է հիմնականում Միջերկրական ծովի շրջակայքում անբարենպաստ եղանակային պայմանների պատճառով: Հոլանդական և բելգիական կեռասները նույնպես վաճառվում են բարձր գներով, բայց դրանք հիմնականում նախատեսված են ներքին շուկայի համար[7]:

2019 թվականին թարմ կեռասը աշխարհի 833-րդ ամենաշատ վաճառվող ապրանքն էր, ընդհանուր առմամբ 3,72 մլրդ ԱՄՆ դոլար: 2018-2019 թվականներին կեռասի արտահանումն աճել է 14,6%-ով՝ 3,25 մլրդ ԱՄՆ դոլարից հասնելով 3,72 մլրդ ԱՄՆ դոլար: Թարմ կեռասի առևտուրը կազմում է համաշխարհային առևտրի 0,021% -ը[8]:

Կեռասի արտադրության ծավալներով թոփ 5 երկրներից են Թուրքիան, ԱՄՆ-ը, Չինաստանը, Ուկրաինան, Ռուսաստանը, Չիլին:



[7] https://www.freshplaza.com/article/9233712/overview-global-cherry-market/
[8] https://oec.world/en/profile/hs92/cherries-fresh#:~:text=In%202019%2C%20the%20top%20importers,%2C%20and%20Canada%20(%24124M).

2019 թվականին կեռասի արտահանմամբ առաջատար երկրներներն Չիլին (1.5 մլրդ ԱՄՆ դոլար), Հոնգ Կոնգը (765 մլն ԱՄՆ դոլար), ԱՄՆ-ը (501 մլն ԱՄՆ դոլար), Թուրքիան (196 մլն ԱՄՆ դոլար) և Իսպանիան (109 մլն ԱՄՆ դոլար):



2019 թվականին թարմ կեռասի ներմուծմամբ առաջատար երկրներն են եղել Չինաստանը (2.33 մլրդ ԱՄՆ դոլար), Գերմանիան (179 մլն ԱՄՆ դոլար), Հարավային Կորեան (135 մլն ԱՄՆ դոլար), Ռուսաստանը (125 մլն ԱՄՆ դոլար) և Կանադան (124 մլն ԱՄՆ դոլար):



2018-2019 թվականների ընթացքում կեռասի արտահանումն ամենաարագ տեմպերով աճել է Չիլիում (483 Մլն ԱՄՆ դոլար), Հոնգ Կոնգում (117 Մլն ԱՄՆ դոլար), Թուրքիայում (28.5 Մլն ԱՄՆ դոլար), Իսպանիայում (26.6 Մլն ԱՄՆ դոլար) և Հունաստանում (14.9 Մլն ԱՄՆ դոլար):

2018-2019 թվականների ընթացքում կեռասի **ներմուծումն ամենաարագ տեմպերով աճել է** Չինաստանում (567 Մլն ԱՄՆ դոլար), **Ռուսաստանում** (16.8 Մլն ԱՄՆ դոլար), Վիետնամում (13.7 Մլն ԱՄՆ դոլար), Իտալիայում (12.3 Մլն ԱՄՆ դոլար) և Նիդերլանդերում (10.1 Մլն ԱՄՆ դոլար):

2.2. Խնձորի և կեռասի հայաստանյան շուկան

Պտղաբուծությունը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության հնագույն ճյուղերից է: Գյուղատնտեսության ոլորտում իրականացված բարեփոխումներին նախորդող տարիներին հանրապետությունում սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացման պատճառով պտղատու այգիների տարածությունները 45.4 հզր հեկտարից (1991 թ.) զգալիորեն նվազեցին՝ կազմելով 21.6 հզր հեկտար (1998 թ.): Սկսած 2002 թվականից՝ պտղատու այգիների տարածքներն ավելացան և 2016 թվականին դրանք կազմեցին արդեն 40.5 հզր հեկտար:

Պտղի և հատապտղի մշակությամբ զբաղվում են հանրապետության բոլոր տարածաշրջաններում, սակայն այգեգործության հիմնական շրջանները տեղաբաշխված են Արարատյան հարթավայրում և նրա մերձակա շրջաններում:

Պտղատու այգիների տարածքները 2017 թվականին 2008 թվականի համեմատությամբ ավելացել են 5.6 հազ. հեկտարով կամ 16 %-ով, իսկ միջին բերքատվությունը 2017 թվականին (2016 թվականն անբարենպաստ տարի էր) 2008 թվականի համեմատ ավելացել է 14.5 %-ով: Ի հաշիվ վերջին 15 տարիներին հիմնված այգիների լիարժեքության, սորտային կազմի բարելավման և նոր այգիներում իրականացվող լիարժեք ագրոտեխնիկական միջոցառումների, կայունացել է այգիների բարձր բերքատվությունը[9]:

[9] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=129512

Հանրապետությունում պտղի և հատապտղի ապրանքայնության մակարդակները[10] միջինից բարձր են և 2017-2018 թվականներին կազմել են համապատասխանաբար 65.0-70.2%:

Բարձր է նաև պտղի և հատապտղի ինքնաբավության մակարդակը՝ 2018 թվականին պտղի և հատապտղի գծով այն կազմել է՝ 108.9%: Ուստի արտադրության ծավալների ավելացումը կնպաստի արտահանման և վերամշակված արտադրանքի ծավալների ավելացմանը:

Պտուղների 2 հիմնական խմբերի՝ կորիզավորներ (ծիրան, դեղձ, սալոր, կեռաս, բալ, հոն, այլ) և հնդավորների (խնձոր, տանձ, սերկևիլ, այլ) տարածքները կազմում են ընդամենը պտուղների տարածքի մոտ 88 %-ը: Հանրապետության պտղաբուծական հիմնական շրջանները տեղաբաշխված են Արարատյան դաշտավայրի և նրա մերձակա շրջաններում: Արարատի, Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերում է տեղաբաշխված հանրապետության պտղատու այգիների ավելի քան 2/3-ը:

Վերջին 3 տարիներին ՀՀ-ի հողային հաշվեկշռի տվյալների համաձայն գյուղատնտեսական հողատեսքերի կազմում բազմամյա տնկարկների տարածքը շարունակաբար աճում է: Եվ 2020-ին 37.3 հազ. հեկտար բազմամյա տնկարկների տարածքի ավելի քան 97%-ը ոռոգվում է: Հանրապետության գյուղատնտեսության զարգացման տեսանկյունից խիստ դրական երևույթ կարելի է համարել դիտարկվող ժամանակահատվածում բազմամյա տնկարկների տարածքների աճը:

2014 թվականին ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացվել է Գյուղատնտեսական համատարած հաշվառում: Ըստ ստացված տեղեկատվության՝ բազմամյա տնկարկների տարածությունների (գյուղատնտեսական նշանակության հողեր) կառուցվածը հետևյալն է՝

	Պտղի տարածություն	65.7%
	Հատապտղի տարածություն	0.9%

[10] Գյուղատնտեսական մթերքի ապրանքայնության մակարդակն իրենից ներկայացնում է տնտեսության կողմից վաճառված, ապրանքափոխանակման և ծառայությունների դիմաց բնամթերքով տրված ծավալների տեսակարար կշիռների հանրագումար:

	Խաղողի տարածություն	33.4%

Տարածությունների կառուցվածքը ըստ պտուղների տեսակների



Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, armstat.am

Ինտենսիվ այգեգործություն

Վերջին տարիներին հանրապետությունում սկսել են ակտիվանալ գյուղատնտեսական նշանակության հողատարածքներում ինտենսիվ պտղատու այգիների մշակմանն ուղղված գործողությունները: Ինտենսիվ այգին ավանդական այգուց տարբերվում է միավոր տարածքի վրա բույսերի խտությամբ, կիրառվող նոր տեխնոլոգիաներով՝ էտի և ձևավորման նոր ձևերով, բույսերի սնուցումների տարբեր եղանակներով և այլն, որը այգու լրիվ բերքատվության մեջ մտնելուց հետո ապահովում է միավոր տարածքից առավելագույն բերքի ստացումը: Սակայն նման այգիների հիմնման և պտղաբուծության զարգացմանը խոչընդոտող գործոններից մեկը տնտեսավարողների ֆինանսական միջոցների սղությունն է, քանի որ այգիների հիմնումը որպես այդպիսին մեծ ներդրումներ է պահանջում:

Խնձորենու ինտենսիվ այգիներ հիմնվել են Հայաստանի Հանրապետության տարբեր տարածքներում, տարբեր կլիմայական պայմաններում: Օրինակներից են.

- **«Նորատունկ» ՓԲԸ-ն** Հայաստանում առաջին, գիտական հիմքի վրա ստեղծված, տնկանյութի արտադրությամբ զբաղվող առաջատար ընկերությունն է: Հիմնադրվել է 2003թ.-ին՝ պտղատու ծառերի և արմատակալների տեղական արտադրության կազմակերպման, Հայաստանում այգեգործության զարգացման նպատակով: Առաջին խնձորենու ինտենսիվ այգին «Նորատունկ»-ի կողմից հիմնվել է դեռ 2006 թվականին՝ Կոտայքի մարզի Առինջ գյուղում: Ներկայումս խնձորենու ինտենսիվ այգիներ են հիմնվում Կոտայքի մարզի տարածքում՝ շուրջ 50 հեկտարի վրա:

- **Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Մարտունի բնակավայրում** հիմնվել է **2 հեկտար խնձորենու ինտենսիվ այգի**: Բոլոր տնկանյութերը բերվել են Ավստրիայից ու Գերմանիայից, իսկ պատվաստումը կատարվել է տեղում՝ կլիմայավարժեցում ապահովելու նպատակով: Պահպանել են ծառերի ցածրաճ վիճակը՝ որակյալ ու ապրանքային բերք ապահովելու համար: Մեկ ծառից ակնկալում էին մինչեւ 50 կիլոգրամ բերք: Այժմ հավաքում են առաջին բերքը՝ մեկ ծառից ստանալով մինչեւ 5-10 կիլոգրամ:

- **«Սպայկա» ընկերությունը** մեծ ներդրումներ է անում հայկական գյուղատնտեսության զարգացման գործում: Աճեցնում են ծիրանի, դեղձի, խնձորի, սալորի, կեռասի, տանձի և այլ պտուղների հատուկ տեսակներ: 2016 թվականից սկսած «Սպայկա» ընկերությունը **Արմավիրի մարզի Շենիկ և Կոտայք մարզի Ալափարս համայքներում 500 հա** տարածքում մեկնարկել է նորագույն տեխնոլոգիաներով հագեցած **ինտենսիվ այգիների հիմնումը: Ընկերության ինտենսիվ այգիների սերտիֆիկացված են Global Gap համաշխարհային ստանդարտներով և գործում են որակի կառավարման ISO 9001, ISO 22000 միջազգային չափանիշներին համապատասխան:**

- **Աշտարակի տարածաշրջանի խնձորի ինտենսիվ այգիներ**. Այգու ընդհանուր տարածքը **35 հեկտար է**, որոնցից 1**0 հա-ը խնձորի և կեռասի ինտենսիվ այգիներ են**, ներդրված է կաթիլային համակարգ և հակակարկտային ցանց:

- 2019թ.-ի դրությամբ **Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք** խնձորի ինտենսիվ այգի: Ինտենսիվ այգու հիմնումն իրականացրել է **«Էկոշին Գրուպ» ՍՊԸ-ն**՝ ապահովելով մոտ 50-60 աշխատատեղ:

- Ինտենսիվ խնձորի այգի **Լուսակերտի** հատվածում: Ընդհանուր հողատարածքը փաստացի **14 հեկտար է**, որից 3.5 հեկտարի վրա հիմնված է խնձորի ինտենսիվ այգի: Հիմնվել է 6 տարի առաջ: Խնձորենու թզուկային տնկիները բերված են Եվրոպայից: Տարեկան ակնկալվող համախառն բերքատվությունը մոտ 100-150 տոննա է:

Խնձորի շուկա

Դիտարկենք խնձորի արտադրության, առևտրի և սպառման շուկան Հայաստանի Հանրապետությունում:

Հանրապետության պտղաբուծությունում, ըստ զբաղվածների թվի, անվիճելի առաջատարը խնձորենու մշակությունն է:

Տնտեսությունների քանակն ըստ իրավական կարգավիճակի և դրանց կողմից խնձորի բազմամյա տնկարկների մշակման

	Ֆիզիկական անձի կարգավիճակով		Իրավաբանական անձի կարգավիճակով	
	Պտղատու այգի	Խնձոր	Պտղատու այգի	Խնձոր
Հայաստանի Հանրապետություն	***184,881***	***115,540***	***49***	***23***
Արագածոտն	18,835	13,871	4	-
Արարատ	22,907	10,181	3	1
Արմավիր	15,286	3,309	11	5
Գեղարքունիք	20,606	17,840	-	-
Լոռի	20,006	13,794	4	2
Կոտայք	29,211	22,057	3	3
Շիրակ	11,000	9,350	1	1
Սյունիք	13,067	9,359	2	2
Վայոց Ձոր	8,173	5,774	8	2
Տավուշ	20,920	8,452	8	5
Երևան	4,871	1,554	5	2

Աղբյուրը՝ Գյուղատնտեսության համատարած հաշվառում, 2014թ., armstat.am (վերջին հրապարակված պաշտոնական տեղեկատվություն)

Աղյուսակից պարզ է դառնում, որ գյուղատնտեսական հաշվառման արդյունքներով արձանագրված 184,881 ֆիզիկական անձի կարգավիճակ ունեցող տնտեսություններից, որոնք զբաղվում են պտղաբուծությամբ, 115,540-ը (62,5%) խնձոր է աճեցնում: Հարկ է նշել, որ խնձորի աճեցմամբ զբաղվող տտեսությունների թիվը ամենամեծ տեսակարար կշիռն է կազմում պտղատու այգիների մշակմամբ զբաղվող տնտեսությունների քանակում: Իսկ այս պտղատեսակի արտադրությունը կենտրոնացած է Կոտայքի և Արագածոտնի մարզերում:



Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, armstat.am

ՀՀ-ում խնձորի արտադրության, ներմուծման, օգտագործման և արտահանման ծավալները (հազ. տոննա)

Տարի	Արտադրություն	Ներմուծում	Մնացի օգտագործում	Արտահանում
2015	127.0	1.1	115.7	1.9
2016	62.6	2.4	73.6	3.5
2017	116.1	5.3	92.9	4.9
2018	109.9	5.0	92.4	11.1
2019	81.7	4.0	75.1	14.4

Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության ազգային պարենային հաշվեկշիռ

Ինչպես տեսնում ենք, 2015-2019 թվականների վիճակագրության համաձայն խնձորի շուկայում արտահանման ծավալների շեշտակի աճ է գրանցվել: Մասնավորապես, 2015 թվականի գրեթե 2 հազ. տոննա մրգի արտահանման ցուցանիշը 2019-ին արդեն կազմել է ավելի քան 14 հազ. տոննա:

Արտահանման ծավալների այս աճը ուղեկցվում է շուկայում ինքնաբավության աստիճանի ավելացմամբ:

ՀՀ-ում խնձորի շուկայում ինքնաբավության տոկոսը և մեկ շնչի հաշվով սպառման ծավալները (հազ. տոննա)

Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության ազգային պարենային հաշվեկշիռ

Խնձորի միջին մանրածախ գինը 2015-2020 թվականներին (ՀՀ դրամ)

Տարի	Ինքնաբավության աստիճան, %	Սպառումը մեկ շնչի հաշվով, կգ/տարի
2015	100.6	41.2
2016	101.8	26.4
2017	99.7	33.4
2018	105.9	33.3
2019	114.6	27.1



Աղբյուրը՝ ՀՀ պարենային ապահովություն և աղքատություն, armstat.am

2019-ին խնձորի մեկ կիլոգրամի միջին մանրածախ գինը նախորդ տարվա 506 դրամի համեմատ նվազել է 9.7 %-ով: Իսկ ահա 2020-ին 2019-ի 457 դրամի դիմաց աճելով 49.7 % միջին գինը դարձել է 684 դրամ:

Հայաստանից մրգի արտահանման շուկայում առյուծի բաժինը պատկանում է Ռուսաստանի Դաշնությանը: ՌԴ-ն անհամեմատ առաջատար է նաև ՀՀ-ից արտահանվող թարմ խնձոր ներկրելու հարցում: Սա իհարկե որոշակի ռիսկեր է պարունակում, քանի որ ռուսաստանյան շուկայում ցանկացած ցնցում անմիջապես իր ազդեցությունը կունենա մեր երկրից մրգերի արտահանման վրա:

ՀՀ-ից թարմ խնձորի արտահանումը դեպի ՌԴ 2015-2019 թվականներին (տոննա)



Աղբյուրը՝ International Trade Center, Trade MAP, www.trademap.org

ՀՀ-ից խնձոր արտահանող առաջատար ընկերություններից են՝

- «Սպայկա» ՍՊԸ;
- «Վեդի Ալկո» ՍՊԸ;
- «Իմ լոգիստիկան» լոգիստիկայի և միջազգային բեռնափոխադրումների ընկերություն;
- «Անթառամ» ԱԿ:

Կեռասի շուկա

Դիտարկենք կեռասի արտադրության, առևտրի և սպառման շուկան Հայաստանի Հանրապետությունում:

Տնտեսությունների քանակն ըստ իրավական կարգավիճակի և դրանց կողմից կեռասի բազմամյա տնկարկների մշակման

	Ֆիզիկական անձի կարգավիճակով		Իրավաբանական անձի կարգավիճակով	
	Պտղատու այգի	*Կեռաս*	*Պտղատու այգի*	*Կեռաս*
Հայաստանի Հանրապետություն	***184,881***	***22 312***	***49***	***3***
Արագածոտն	18,835	3 415	4	-
Արարատ	22,907	2 839	3	1
Արմավիր	15,286	5 142	11	1
Գեղարքունիք	20,606	592	-	-

Լոռի	20,006	1 233	4	-
Կոտայք	29,211	6 445	3	1
Շիրակ	11,000	237	1	-
Սյունիք	13,067	1 096	2	-
Վայոց Ձոր	8,173	530	8	-
Տավուշ	20,920	393	8	-
Երևան	4,871	391	5	-

Աղբյուրը՝ Գյուղատնտեսության համատարած հաշվառում, 2014թ., armstat.am (վերջին հրապարակված պաշտոնական տեղեկատվություն)

Պատկերը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում 184,881 պտղատու այգիներում ֆիզիկական անձանց կողմից 22,312-ում (12,1%) կեռասենիներ են աճեցվում: Բազմամյա տնկարկներ ամենից շատ աճեցնում են Կոտայքի, Արմավիրի, Արագածոտնի և Արարատի մարզերում:



Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, armstat.am

Արտադրանքի թողարկման տեսանկյունից հանրապետությունում կեռասի արտադրության 53%-ը բաժին է ընկնում Արմավիրի մարզին, 16%-ով հետևում է Կոտայքի մարզը, ապա Արագածոտնի և Արարատի մարզերը՝ համապատասխանաբար 10% և 9% մասնաբաժիններով:

Կեռասը մեկն է այն պտուղներից որոնք ամենից շատն են արտահանվում Հայաստանի Հանրապետությունից:

Կեռասի շուկայում արտադրության առումով 2015-2019 թվականների ընթացքում ամենահաջող տարին եղել է 2015-ը. ավելի քան 14 հազ. տոննա բերք: Մինչև 2017-ը մեծ անկում է գրանցվել այս պտղի արտադրության ոլորտում: Սակայն 2018-ից սկսած արտադրության տեմպերը սկսել են աճել: Ներմուծում առաջին անգամ գրանցվել է 2019-ին: Ինչ վերաբերում է արտահանմանը, ապա այստեղ ևս 2018-ից սկսած մեծ ակտիվություն է նկատվում:

ՀՀ-ում կեռասի արտադրության, ներմուծման, օգտագործման և արտահանման ծավալները (հազ. տոննա)

Տարի	Արտադրություն	Ներմուծում	Սննդի օգտագործում	Արտահանում
2015	14.4	0.0	10.0	2.1
2016	12.1	0.0	11.7	1.0
2017	8.4	0.0	6.1	2.1
2018	12.5	0.0	7.1	4.7
2019	12.8	0.6	6.7	6.5

Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության ազգային պարենային հաշվեկշիռ

Կեռասի շուկայում ինքնաբավության բարձր մակարդակով (**2019-ի 184.3 %**) պայմանավորված մեր երկրում այս մրգատեսակի ներմուծման անհրաժեշտություն չկա:

ՀՀ-ում կեռասի շուկայում ինքնաբավության տոկոսը և մեկ շնչի հաշվով սպառման ծավալները (հազ. տոննա)

Տարի	Ինքնաբավության աստիճան, %	Սպառումը մեկ շնչի հաշվով, կգ/տարի
2015	117.1	3.6
2016	108.6	4.2
2017	134.2	2.2
2018	160.8	2.6
2019	184.3	2.4

Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության ազգային պարենային հաշվեկշիռ

2.3. Խնձորի և կեռասի ռուսաստանյան շուկան

Խնձորի շուկա

Խնձորը ռուսաստանցիների սննդակարգում համարվում է հիմնական կարևորագույն պտղատեսակներից մեկը: Ըստ ՌԴ Առողջապահության նախարարության Ռուսաստանում տարեկան կտրվածքով **մեկ շնչի հաշվով պտուղների և հատապտուղների սպառման պահանջարկը 100 կգ է, որից 50 կգ-ը խնձորն է**:

Երկրի հարավային շրջանների բնակլիմայական պայմանները թույլ են տալիս զբաղվել խնձորի արտադրությամբ և ունենալ բավական լավ արդյունք:

Խնձորի արտադրության ծավալները Ռուսաստանի Դաշնությունում (տոննա)

Աղբյուրը՝ Food and Agriculture Organization of the United States, www.fao.org



Ռուսաստանում կան նաև ինտենսիվ այգիների մեթոդով աճեցվող խնձորի պտղատու այգիներ, որոնք տարեցտարի մեծ արդյունավետություն են ունենում: Սակայն ներքին շուկայի սպառումն ապահովելու տեսանկյունից սրանց քանակը դեռ շատ քիչ է: Այդ է պատճառը, որ երկրում սպառվող խնձորի քանակության զգալի մասը ներկրվում է: Մասնավորապես, **մրգի 54%-ը կազմում է հայրենական արտադրողների բաժինը, իսկ 46%-ը՝ ներկրվածինը:** Այսօր Ռուսաստանը խնձորի ներկրման ծավալներով աշխարհում առաջատար է՝ համաշխարհային առևտրում ունենալով 13% մասնաբաժին:

Խնձորի ներկրման ծավալները Ռուսաստանի Դաշնությունում (տոննա)

N	Մատակարարներ	2016	2017	2018	2019	2020
1	Մոլդովա	112,943	229,317	246,035	250,020	206,258
2	Սերբիա	193,364	168,122	125,611	160,472	131,784
3	Ադրբեջան	61,713	66,846	82,322	88,575	66,952
4	Թուրքիա	-	9,008	41,631	10,615	44,951

5	N/A	-	-	-	6,050	41,584
6	Հարավային Աֆրիկա	14,017	16,556	16,041	14,266	40,540
7	Չիլի	20,766	27,322	29,720	18,516	28,044
8	Հյուս. Մակեդոնիա	29,667	9,300	8,899	18,195	23,180
9	Նոր Զելանդիա	5,803	8,341	8,310	9,287	21,141
10	Բրազիլիա	2,335	2,352	9,757	5,931	19,719
17	Հայաստան	1,100	1,867	2,730	543	1,949

Աղբյուրը՝ International Trade Center, Trade MAP, www.trademap.org

Ռուսական շուկայում խնձորի ամենամեծ մատակարարը Մոլդովան է, որին հետևում է Սերբիան: 2019-ին Մոլդովայից ներկրված խնձորի միջին մանրածախ գինը եղել է 27,2 ռուբլի/կգ, իսկ Սերբիայից բերվածինը՝ 53,6 ռուբլի/կգ:

ՀՀ-ից ՌԴ ներմուծված խնձորի ծավալները (տոննա) 2016-2020 թթ.



Աղբյուրը՝ International Trade Center, Trade MAP, www.trademap.org

Վերջին հինգ տարիներին դեպի ՌԴ ՀՀ-ից ամենամեծ ծավալներն են գրանցվել 2018 թվականին (2730 տոննա խնձոր): Նշենք, որ 2019 թվականին դեպի Ռուսաստանի Դաշնություն արտահանման քիչ ծավալները հիմնականում պայմանավորված են եղել մեր երկրում այդ տարվա եղանակային անբարենպաստ պայմաններով, ինչը և հանգեցրել է ցածր բերքատվության:

Ինչ վերաբերում է խնձորի շուկայական գներին, ապա, 2020-ի հունիսին մեծ աճ է գրանցվել նախորդ տարվա նույն ամսվա համեմատ (գրեթե 30%): 2019-ին այն եղել է 105,3 ռուբլի, իսկ 2018-ի հունիս ամսին շուկայական մանրածախ միջին գինը 1 կգ-ի համար կազմել է 110,5 ռուբլի: Իսկ մրգի ամենապահանջված տեսակների մասով

2020-ի հուլիսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ գնի աճի պատկերը հետևյալն է.

- Ֆուջի – 46%-ով,
- Գալա - 44%-ով,
- Գոլդեն Դելիշես - 38%-ով:

Կեռասի շուկա

Կեռասի արտադրությունը համարվում է Ռուսաստանում ամենախոստումնալից ուղղություններից մեկը պտղաբուծության ոլորտում: Այս պտղատեսակի հիմնական առավելությունը հասունացման վաղ ժամկետներն են, ինչը հնարավորություն է տալիս բնակչությանն ապահովել բարձր օգտակարության մրգատեսակով դեռ մայիսի կեսերից:

Կեռասի արտադրման ծավալները Ռուսաստանի Դաշնությունում (տոննա)



Աղբյուրը՝ Food and Agriculture Organization of United States, www.fao.org

BusinesStat-ի հետազոտության տվյալներով 2020-2024 թվականներին բալի և կեռասի վաճառքի ծավալները Ռուսաստանում աճելու են 16%-ով: **Ռուսական շուկայում այս մրգատեսակի ինքնաբավության խնդիր կա:** Ինչն էլ պայմանավորում է տարածաշրջանում Ռուսաստանի՝ այս մրգի ներկրման մասով առաջատարը լինելը:

Ռուսաստանում կեռասի աճեցմամբ առանցքային շրջաններն են Հարավային, Պրիվոլժսկի, Հյուսիսկովկասյան և Կենտրոնական շրջանները:

Կեռասի ներկրման ծավալները Ռուսաստանի Դաշնությունում ըստ երկրների (տոննա)

N	Մատակարարներ	2016	2017	2018	2019	2020
1	Մոլդովա	1,318	1,157	2,328	2,654	3,140
2	Սերբիա	3,305	3,139	2,301	2,233	2,827
3	Թուրքիա		4	6	25	361
4	Բելառուս	5,288	2,862	5,156	3,057	151
5	Ադրբեջան	28	139	16	32	66
6	Ուզբեկստան			8	26	11
7	Մակեդոնիա	13	18	12		2
8	Հայաստան					1
9	Վրաստան		5		3	
10	Իրան	37	254	502	3,268	

Աղբյուրը՝ International Trade Center, Trade MAP, www.trademap.org

Կեռասի ռուսաստանյան շուկայում կարելի է առանձնացնել ապրանքի իրացման հետևյալ հիմնական ուղղությունները.

- վերավաճառողներ,
- մեծածախ շուկաներ,
- մանրածախ ցանցեր և սուպերմարկետներ,
- գյուղատնտեսական ապրանքների վաճառքի էլեկտրոնային հարթակներ,
- պետական տեղերներ:

Այսպիսով, շուկայի հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ արտադրանքի իրացման մասով ընկերությունը ունի լայն հնարավորություններ, ինչը և թույլ կտա ընդունել բիզնեսի հետ կապված ռիսկերն ու ձգտել հասնել հնարավորությունների առավելագույն կատարմանը:

3. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Ընկերության ընդհանուր բիզնես մոդելը բաղկացած է երկու հիմնական ուղղություններից՝ խնձորի և կեռասի ինտենսիվ այգիներ և սառնարանային տնտեսություն:



Նշված 70 հեկտարից 60 հեկտարը նախատեսվում է խնձորի այգու համար, 10 հեկտարը՝ կեռասի այգու համար, մոտ 4350 քմ տարածությունը՝ սառնարանային տնտեսության համար, 100 քմ՝ փոքրիկ գրասենյակային տարածք, իսկ մնացած հատվածը կծառայի տնտեսության ընդհանուր շահագործման կազմակերպման համար որպես սպասարկող տարածություն:

Սառնարանային տնտեսությունը կկազմակերպվի նույն տարածքում բերքի տեղափոխման աշխատանքների հեշտ կազմակերպման և այլ լրացուցիչ ծախսերից խուսափելու համար:

Նախատեսվում է, որ այգուց ստացված բերքը պետք է պահպանվի սառնարանում, որտեղից էլ կկազմակերպվի իրացումը: Սառնարանային տնտեսությունը թույլ կտա բերքը պահպանել մինչև 12 ամիս և իրացումը կազմակերպել առավել նպատակահարմար ժամանակահատվածում:

Խնձորի և կեռասի արտադրության և իրացման ընդհանուր արժեշղթան կկազմակերպվի հետևյալ կերպ.



3.1. Խնձորի և կեռասի ինտենսիվ այգիներ

Ծրագրով նախատեսվում է ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքում ընդհանուր 97.151 հա տարածքում կազմակերպել խնձորի ու կեռասի ինտենսիվ այգիների մշակություն և զարգացում:

Այգու տեղի ընտրությունը կատարելիս հաշվի են առնվել.

- Բարենպաստ կլիմակական պայմանները՝ ջերմությունը, խոնավությունը, օդի և լույսի ռեժիմները;
- Տեղի մակերևույթը (ռելիեֆը). աշխարհագրական դիրքը և դրան հետ կապված կլիմայական գործոնների փոփոխությունը;
- Հողի որակական հատկանիշները:

Ըստ նախնական պլանավորման, նախատեսվում է, որ խնձորի այգիների ընդհանուր տարածությունը կկազմի 60 հա, իսկ կեռասինը՝ 10 հա:

Այգիների հիմնում

Այգեհիմնման աշխատանքները կկազմակերպվեն երկու փուլով.

Այգեհիմնման աշխատանքների առաջին փուլ՝ 2021 թվական.

- հողի նախապատրաստական աշխատանքներ
- կաթիլային ոռոգման համակարգի անցկացում

- հակակարկտային համակարգի ապահովում

Այգեհիմնման աշխատանքների երկրորդ փուլ՝ 2022 թվականի գարուն.

- կեռասի ու խնձորի տնկիների ստացում
- ծառատունկ

2021 թվականին նախատեսվում է կազմակերպել հողի նախապատրաստական աշխատանքները, ինչպես նաև կաթիլային ոռոգման ու հակակարկտային համակարգի ապահովման աշխատանքները:

Հողի նախապատրաստական աշխատանքների մեջ կիրականացվի տարածքի խորը վարի, չիզելի, քարհավաքի և հողամասի տեղաձևման, տնկման փոսերի հորատման աշխատանքները:

Կաթիլային ոռոգման ու հակակարկտային համակարգի անցկացման համար նախատեսվում է համագործակցել տեղական ընկերությունների հետ:

Տնկիների բարձր որակի ապահովման և դրանց փչանալու հետ կապված հնարավոր ռիսկերի մեղմացման համար նախատեսվում է դրանց ձեռքբերումը Իտալիայից՝ բերքավության կանխատեսվող ցուցանիշների և արտադրանքի բարձր որակի ապահովման երաշխիքից ելնելով: Ծառատնկումը կկազմակերպվի 2022 թվականի գարնանը:

Ընդհանուր առմամբ այգու հիմնման հետ կապված առաջիկա երկու տարիների համար գործողությունների պլանը կլինի հետևյալը.

Գործողությունների պլան

Գործողություն	2021												2022											
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Հողային նախապատրաստական աշխատանքներ*						■	■	■	■															
Տնկման փոսերի հորատում									■															
Կաթիլային ոռոգման համակարգի անցկացում									■	■														
Հակակարկտային ցանցի անցկացում									■	■														
Տնկիների ձեռքբերում															■	■								
Հողախառնուրդի պատրաստում և տեղափոխում																■								
Ծառատնկում																■								
Ծառերի էտ																	■							
Պարարտանյութերի, թունաքիմիկատների, բուժանյութերի տրամադրում																	■							
Ոռոգում																■	■	■	■	■	■			
Այգիների սպասարկման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում																	■	■						
Առաջին բերքահավաք (խնձոր)																					■	■		
Ապրանքի իրացում																					■	■		
Գրասենյակային տարածքի կառուցում														■	■									

Ծառատունկ

Ծառատնկման աշխատանքները կկազմակերպվեն հողի նախապատրաստական աշխատանքներին հաջորդող տարվա գարնանը: Տնկիները կպատվիրվեն Իտալիայից՝ անհրաժեշտ որակի ապահովման նկատառումներից ելնելով:

Քանի որ աշխատանքը տարվելու է այսպես ասված «կենդանի օրգանիզմի» հետ, նախատեսվում է, որ ոչ բոլոր ծառերը կհարմարվեն տեղի հողային պայմաններին և հնարավոր են չորացումներ: Նման ռիսկերի հնարավոր փոխահատուցման համար պլանավորվում է, որ տնկիների 97.5%-ը կլինի բերքատու, այսինքն՝ դրված ծառերի 2.5%-ը կչորանա: Ուստի պլանավորվում է, որ հաջորդ երկու տարիների ընթացքում ևս այս մասով էլի կարվեն ներդրումներ՝ չորացած ծառերը նորով փոխարինելու համար:

Խնձորի տնկումը կկազմակերպվի 80սմ x 3.5մ սխեմայով՝ 1 հեկտարի հաշվով տեղադրելով 3600 տնկի, իսկ կեռասի դեպքում տնկման սխեման կլինի՝ 1մ x 3.5մ՝ մեկ հեկտարի հաշվով նախատեսելով 2880 տնկի:

Ծառատնկման ժամանակ տնկիները կհարստացվեն հատուկ հողախառնուրդով՝ հումուսով, ինչը լրացուցիչ սնուցում կապահովի դրանց համար:

Ծառերի խնամք

Ծառերի խնամքի արդյունավետ կազմակերպման և կանխատեսվող բերքատվության ցուցանիշների ապահովման համար նախատեսվում է, որ այգին կունենա կաթիլային ոռոգման համակարգ՝ իր ավազանով (ջրի հետ կապված հնարավոր ռիսկերի մեղմացման համար), հակակարկտային ցանցերի համակարգ՝ բերքը կարկտահարությունից առավելապես պաշտպանելու համար, ինչպես նաև արդյունավետ կերպով կկազմակերպվեն պարարտացման, թունաքիմիկատներով ու բուժանյութերով ծառերի խնաքի միջոցառումները:

Ըստ սեզոնի կանցկացվի նաև ծառերի էտը:

Ծառերի ու այգու խնամքի հետ կապված աշխատանքների մեծ մասը կկազմակերպվի ավտոմատացված եղանակով՝ տարբեր սարքավորումների կիրառմամբ:

Բերքահավաք և բերքատվություն

Նախատեսվում է, որ խնձորի տնկիները բերքատու կդառնան հենց տնկման առաջին տարում, իսկ կեռասի տնկիները՝ տնկման հաջորդ տարվանից:

Մրգերի բերքատվության համար կանխատեսվում են բերքատվության հետևյալ ցուցանիշները.

Բերքատվություն (տ/հա)	Տարի									
	2022	*2023*	*2024*	*2025*	*2026*	*2027*	*2028*	*2029*	*2030*	*2031*
Խնձոր	1.0	10.0	22.0	40.0	60.0	60.0	60.0	60.0	60.0	60.0
Կեռաս	-	2.0	4.0	7.5	10.0	14.0	18.0	20.0	20.0	20.0
Բերքի պիտանելիություն	75%	80%	85%	90%	90%	95%	95%	95%	95%	95%

Անկախ խնամքի միջոցառումներից, միևնույն է ստացված բերքն ամբողջությամբ պիտանի չի լինի իրացման համար, ուստի բերքի համար կանխատեսվել են նաև պիտանելիության որոշակի գործակիցներ՝ առավել իրատեսական կանխատեսումներ ունենալու համար: Իհարկե, այս ցուցանիշները իրական պայմաններում կարող են տատանվել:

Փաթեթավորում

Բերքի հավաքումից հետո նախատեսվում է, որ դրանք արկղերով կտեղափոխվեն սառնարանային տնտեսություն: Խնձորի համար կօգտագործվեն մոտ 300 կգ խնձորի տարողությամբ փայտե արկղեր, իսկ կեռասի համար՝ մինչև 13 կգ կեռասի տարողությամբ պլաստիկե արկղեր: Այդ նույն արկղերով միրգը կպահպանվի սառնարանում մինչև իրացումը:

3.2. Սառնարանային տնտեսություն

Արտադրանքի իրացումը ըստ առավել նպատակահարմար սեզոնի կազմակերպելու համար ընկերությունը նախատեսում է այգուն կից հիմնել սառնարանային տնտեսություն, որը հագեցած կլինի բոլոր հնարավոր հարմարություններով մրգի պահպանումը ճիշտ կազմակերպելու համար:

Տնտեսության շինարարարական աշխատանքները նախատեսվում է սկսել 2022 թվականից այնպես, որ 2023 թվականին այն արդեն պատրաստ կլինի սպասարկելու:

Սառնարանի տարածությունը կլինի մոտ 4350 քմ՝ նախատեսված 3000 տոննա բերքի պահպանման համար:

Տնտեսությունը կկառուցվի նորագույն լուծումներով, ինչը հնարավորություն կտա բերքը պահպանել մինչև 12 ամիս:

Նախատեսվում է, որ բերքի ծավալների աճին զուգահեռ 2024 թվականին ընկերությունը ձեռք կբերի նաև տեսակավորման հոսքագիծ:

Բերքի փաթեթավորում և իրացում

Բերքը սառնարանից կիրացվի հատուկ ստվարաթղթե տուպերով: Նախատեսվում է, որ ապրանքի ընդամենը 5%-ը կիրացվի տեղական շուկայում, իսկ մնացածը կարտահանվի Ռուսաստանի Դաշնություն:

Ներկայումս ընկերությունը բանակցությունների մեջ է ռուսական առաջատար ու խոշոր առևտրի կենտրոնների հետ հետագայում ապրանքի անխափան մատակարարումը կազմակերպելու համար:

3.3. Աշխատակազմ

Այգիների հիմնումն ու սառնարանային տնտեսության շահագործումը ենթադրում են մարդկային ռեսուրսների զբաղվածության մեծ ծավալների ապահովում:

Այս տնտեսությունների համար կարելի է տարբերակել սեզոնային ու մշտական զբաղվածության տարբերակները:

Որոշ աշխատանքներ, ինչպես ծառերի էտ, էտած ճյուղերի հավաքում ու այգու տարածքի մաքրում, բերքահավաք, սառնարանում մրգի տեսակավորում ու փաթեթավորում, կկազմակերպվեն սեզոնային աշխատողների միջոցով՝ կախված այդ աշխատանքների սեզոնային լինելու հանգամանքից: Այս դեպքում ընկերության աշխղեկը և սառնարանի մենեջերը կունենան պայմանավորվածություն նման աշխատանքներ իրականացնող մարդկանց համապատասխան խմբերի հետ, որոնք էլ ամեն տարի անհրաժեշտ սեզոնին կմատուցեն պլանավորվող ծառայությունը:

Բացի սեզոնային աշխատողներից այգու մասով ընկերության մշտական աշխատողների հաստիքներն ու նրանց համար պլանավորվող աշխատավարձի տվյալները ներկայացված են ստորև աղյուսակում.

Խնձորի և կեռասի ինտենսիվ այգիների շահագործման համար անհրաժեշտ անձնակազմը և աշխատավարձը, ՀՀԴ

ՀԱՍՏԻՔ	ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹԻՎ (մեկ հերթափոխ)	ՀԵՐԹԱՓՈԽ	ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎ	ԱՄՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ (առանց հարկերի)	ԱՄՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ (ներառ. հարկեր)	ԱՄՍԱԿԱՆ ՎՃԱՐՎՈՂ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ	ԸՆԴՀԱՆՈՒՐ (ներառ. հարկեր)
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ							
Գյուղատնտես /տնօրեն	1	1	1	475,000	668,056	193,056	668,056
Գյուղատնտեսի օգնական	1	1	1	300,000	422,302	122,302	422,302
Մեխանիկ	1	1	1	250,000	350,360	100,360	350,360
Մեխանիզատոր	4	1	4	200,000	278,417	78,417	1,113,668
Աշխղեկ	2	1	2	325,000	458,273	133,273	916,546
Ոռոգման օպերատոր	1	1	1	225,000	314,388	89,388	314,388
Ընդամենը արտադրական աշխատողներ		**6**	**10**				
ՎԱՐՉԱԿԱՆ							
Պահակ	2	2	4	100,000	135,570	35,570	542,280
Գործավար	1	1	1	120,000	162,416	42,416	162,416
Ընդամենը վարչական աշխատողներ		**3**	**5**			-	
ԸՆԴԱՄԵՆԸ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ			**15**			**794,782**	**4,490,016**

Աշխատողների թվաքանակները պլանավորվում են 70 հա այգու ընդհանուր սպասարկման համար: Իհարկե, ամեն աշխատող ունի իր տեղն ու դերը, սակայն աշխատանքների արդյունավետ կազմակերպման տեսանկյունից կարևորվում է հատկապես գյուղատնտեսի ու աշխղեկի դերը:

Սառնարանային տնտեսության շահագործման համար անհրաժեշտ անձնակազմը և աշխատավարձը, ՀՀԴ

ՀԱՍՏԻՔ	ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹԻՎ (մեկ հերթափոխ)	ՀԵՐԹԱՓՈԽ	ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎ	ԱՄՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ (առանց հարկերի)	ԱՄՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ (ներառ. հարկեր)	ԱՄՍԱԿԱՆ ՎՃԱՐՎՈՂ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ	ԸՆԴՀԱՆՈՒՐ (ներառ. հարկեր)
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ							
Գլխավոր ինժեներ	1	1	1	425,000	581,250	156,250	581,250
Ինժեների օգնական	1	1	1	250,000	338,194	88,194	338,194
Տեսակավորման հոսքագծի աշխատողներ	15	1	15	150,000	199,306	49,306	2,989,590
Փաթեթավորողներ	15	1	15	150,000	199,306	49,306	2,989,590
Բանվորներ	4	1	4	100,000	131,169	31,169	524,676
Ընդամենը արտադրական աշխատողներ			**36**				
ՎԱՐՉԱԿԱՆ							
Տնօրեն	1	1	1	500,000	702,778	202,778	702,778
Վաճառքի և լոգիստիկայի մասնագետ	1	1	1	300,000	407,639	107,639	407,639
Պահակ	2	1	2	100,000	135,570	35,570	271,140
Գործավար	1	1	1	120,000	162,416	42,416	162,416
Ընդամենը վարչական աշխատողներ			**5**			-	
ԸՆԴԱՄԵՆԸ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ			**41**			**762,628**	**8,967,273**

Տեսակավորման հոսքագծի աշխատողների և փաթեթավորողների թիվը կարող է փոփոխվել աշխատանքների ծավալներից կախված:

4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԼԱՆ

4.1.Հիմնական ենթադրություններ

ՀՈԴՎԱԾ	ՑՈՒՑԱՆԻՇ
Ծրագրի սկիզբ	2021 թվական
Այգետնկման աշխատանքների սկիզբ	2021 թվական
Սառնարանային տնտեսության հիմնման աշխատանքների սկիզբ	2022 թվական
Կանխատեսումների հորիզոն	11 տարի
Բերքատվության ժամկետ	> 10 տարի
Խնձորի բերքատվություն	2-րդ տարվանից սկսած
Կեռասի բերքատվություն	3-րդ տարվանից սկսած
Հիմնական արժույթ	ՀՀԴ
USD / ՀՀ դրամ	533.84
EURO/ՀՀ դրամ	626.73
RUB/ՀՀ դրամ	6.99
Ինֆլացիա և բնական աճ (տարեկան)	5%

Հիմնական աշխատանքների սկիզբը նախատեսվում է սույն թվականին: Այգու հիմնման հետ կապված աշխատանքների երկրորդ փուլը կսկսվի 2022 թվականի գարնանից: Սառնարանային տնտեսության կառուցման աշխատանքները կկազմակերպվեն 2022-2023 թվականների ընթացքում այնպես, որ 2023 թվականին այն արդեն պատրաստ լինի բերքի ընդունման համար:

Նախատեսվում է, որ այգու ֆինանսավորումը կկատարվի վարկային միջոցների հաշվին: Հաջորդ տարիներին անհրաժեշտ ներդրումները կկազմակերպվեն արդեն ընկերության շահառուների ներդրած փոխառությունների հաշվին: Ակնկալվում է վարկավորումը կազմակերպել **ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 29-ի N 361-Լ որոշման համաձայն հաստատված «Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգուների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության» ծրագրի** շրջանակներում, որի համաձայն

ընկերությունը կօգտվի վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման և վարկի մայր գումարի արտոնյալ ժամկետի հնարավորությունից[11]:

Հաշվի առնելով կանխատեսումների հորիզոնը և մակրոտնտեսական միջավայրի տարբեր գործոնների ազդեցությունը՝ կանխատեսումների համար նախատեսվել է 5% ինֆլյացիայի գործակցի ազդեցություն:

4.2. Ներդրումային պլան

Պլանավորվող այգու հիմնման և դրա հետագա խնամքն ու շահագործումը կազմակերպելու համար նախատեսվում է ներդրումների իրականացում հետևյալ ուղղություններով.

- Հողի նախապատրաստական աշխատանքներ
- Կաթիլային ոռոգման համակարգի անցկացում
- Հակակարկտային ցանցի ապահովում
- Տնկիների ձեռքբերում և ծառատնկում
- Այգու հետագա խնամքի ու շահագործման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում
- Աշխատողների համար գրասենյակային տարածքի կառուցում

Սառնարանային տնտեսության համար ներդրումների ուղղությունները հետևյալն են.

- Սառնարանային տնտեսության կառուցում
  - 12 ամբողջությամբ վերահսկվող օդային միջավայրով սենյակներ 3000 տ բերքի համար (յուր. 250 տ)
  - Դռներ սենյակների ու միջանցքերի համար
  - Առանձին հատվածների համար դռներ
  - 12 սենյակների համար պանելներ
  - Ամեն սենյակի ամբողջական իզոլացիա և հերմետիկացում

[11] ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 175-Լ որոշմամբ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը, վարկերը հասանելի կլինեն՝ 0 % տոկոսադրույքով, 8 տարի մարման և 5 տարի արտոնյալ ժամկետներով:

- Օդի կարգավորման, վերահսկման սարքավորումներ
- Սառեցման սարքավորումներ
- Կեռասի համար հիդրո-քուլեր (3 տ/ժամ)
- Սառնարանի սպասարկող տարածք (բեռնատարների բարձման համար)
- Աշխատանքային տարածք (որտեղ կդրվի տեսակավորման հաստոցը)
- Սենյակների միջև միջանցքեր
- Տեղադրում, մեկնարկ և սպասարկում

- Բեռնման հարմարանքների (кары) ձեռքբերում
- Բեռնատարների համար կշեռքի ձեռքբերում
- Տեսակավորման հոսքագծի ձեռքբերում
- Սպասարկող տարածքի ասֆալտապատում
- Տրանսպորտային միջոցների ձեռքբերում

Անհրաժեշտ ներդրումների և շրջանառու միջոցների ընդհանուր կառուցվածքը ըստ առաջին չորս տարիների գնահատվել է հետևյալ կերպ.

Ներդրումների ուղղությունները	2021	2022	2023	2024	Ընդամենը
Այգեմանկման աշխատանքներ					
Հողային նախապատրաստական աշխատանքներ*	17,640,000	-	-	-	17,640,000
Տնկման փոսերի հորատում	38,556,000	-	-	-	38,556,000
Կաթիլային ոռոգման համակարգ	126,000,000	-	-	-	126,000,000
Հակակարկտային համակարգ	582,750,000	-	-	-	582,750,000
Խնձորի տնկիների ձեռքբերում	-	475,161,617	11,879,040	11,879,040	498,919,698
Կեռասի տնկիների ձեռքբերում	-	101,530,260	2,538,257	2,538,257	106,606,773
Հողախառնուրդի պատրաստում և տեղափոխում	-	44,064,000	1,101,600	1,101,600	46,267,200
Ծառատունկ	-	22,032,000	550,800	550,800	23,133,600
Սարքավորումներ					-
Տրակտոր		72,068,400			72,068,400
Խոտհնձիչ		6,726,384			6,726,384
Պարարտացման, թունաքիմիկատների սարքավորում (гербицидник)		4,804,560			4,804,560
Սրսկիչ		16,815,960			16,815,960
Սայլակներ		21,620,520			21,620,520
Պլատֆորմ		72,068,400			72,068,400
Բերքահավաքի պայուսակներ		480,456			480,456
Մկրատներ		528,502			528,502
Այլ գործիքներ		450,000			450,000
Գրասենյակային տարածքի կառուցում					-
Գրասենյակային տարածք		16,815,960			16,815,960
Ընդամենը այգի	**764,946,000**	**855,167,018**	**16,069,697**	**16,069,697**	**1,652,252,412**
Սառնարանային տնտեսություն					-
Սառնարանային տնտեսություն (տարողությունը 3000 տոննա)*		1,085,809,725	-	-	1,085,809,725
Տեսակավորման հոսքագիծ		-	-	169,973,100	169,973,100
Սպասարկող տարածքի ասֆալտապատում		-	2,430,000	-	2,430,000
Տրանսպորտային միջոցներ		-	270,747,360	-	270,747,360
Ընդամենը սառնարանային տնտեսություն	**-**	**1,085,809,725**	**273,177,360**	**169,973,100**	**1,528,960,185**
Ընդամենը ներդրումներ	**764,946,000**	**1,940,976,743**	**289,247,057**	**186,042,797**	**3,181,212,597**
Շրջանառու միջոցներ					
Շրջանառու միջոցներ	6,169,419	56,228,528	-	-	62,397,947
Ընդամենը ներդրումներ և շրջանառու միջոցներ	**771,115,419**	**1,997,205,271**	**289,247,057**	**186,042,797**	**3,243,610,544**

4.3. Վաճառքի ծավալներ և սեզոնայնություն

Այգուն կից կգործի սառնարային տնտեսություն, որի առկայությունը հնարավորություն կտա ընկերությանը բերքի վերջնական վաճառքը կազմակերպել ըստ նպատակահարմար սեզոնների: 2022 թվականին ստացված խնձորը կիրացվի միանգամից, իսկ 2023 թվականին սառնարանի պատրաստ լինելու հետ բերքը կանցնի պահեստավորման: Նախատեսվում է, որ սառնարանից բերքի իրացումը դեպի Ռուսաստան կլինի խնձորի համար միջինում 500 ՀՀԴ/կգ, իսկ կեռասի համար՝ 1625 ՀՀԴ/կգ գնով: Իսկ տեղական շուկայում ապրանքը կվաճառվի միջինում համապատասխանաբար 438 և 1438 ՀՀ դրամ/կգ արժեքով:

Ըստ բերքատեսակների՝ վաճառքի ծավալների ու ակնկալվող եկամուտների համար կանխատեսվում են հետևյալ ցուցանիշները.

Վաճառքի ենթակա բերք (կգ)	2021	2022	2023	2024	2025	2026	2027	2028	2029	2030	2031
Խնձոր		45,000	480,000	1,122,000	2,160,000	3,240,000	3,420,000	3,420,000	3,420,000	3,420,000	3,420,000
Կեռաս		-	16,000	34,000	67,500	90,000	133,000	171,000	190,000	190,000	190,000

Հասույթ (ՀՀԴ)	2021	2022	2023	2024	2025	2026	2027	2028	2029	2030	2031
Խնձոր	-	23,477,344	250,425,000	585,368,438	1,126,912,500	1,690,368,750	1,784,278,125	1,873,492,031	1,967,166,633	2,065,524,964	2,168,801,213
Կեռաս	-	-	27,142,500	57,677,813	114,507,422	152,676,563	225,622,031	290,085,469	322,317,188	322,317,188	322,317,188
Ընդամենը		**23,477,344**	**277,567,500**	**643,046,250**	**1,241,419,922**	**1,843,045,313**	**2,009,900,156**	**2,163,577,500**	**2,289,483,820**	**2,387,842,152**	**2,491,118,400**
Որից՝											
Տեղական	**-**	**1,033,594**	**12,232,500**	**28,336,875**	**54,706,641**	**81,210,938**	**88,590,469**	**95,385,938**	**100,943,883**	**105,274,124**	**109,820,877**
Խնձոր	*-*	*1,033,594*	*11,025,000*	*25,770,938*	*49,612,500*	*74,418,750*	*78,553,125*	*82,480,781*	*86,604,820*	*90,935,061*	*95,481,814*
Կեռաս	*-*	*-*	*1,207,500*	*2,565,938*	*5,094,141*	*6,792,188*	*10,037,344*	*12,905,156*	*14,339,063*	*14,339,063*	*14,339,063*
Արտահանում	**-**	**22,443,750**	**265,335,000**	**614,709,375**	**1,186,713,281**	**1,761,834,375**	**1,921,309,688**	**2,068,191,563**	**2,188,539,938**	**2,282,568,028**	**2,381,297,523**
Խնձոր	*-*	*22,443,750*	*239,400,000*	*559,597,500*	*1,077,300,000*	*1,615,950,000*	*1,705,725,000*	*1,791,011,250*	*1,880,561,813*	*1,974,589,903*	*2,073,319,398*
Կեռաս	*-*	*-*	*25,935,000*	*55,111,875*	*109,413,281*	*145,884,375*	*215,584,688*	*277,180,313*	*307,978,125*	*307,978,125*	*307,978,125*

4.4. Ծախսեր

Ծախսերի գնահատումը կատարվել է ինտենսիվ այգիների վարման փորձառություն ունեցող տնտեսությունների մասնագետների հետ հարցումների, ոլորտի փորձագետների, սարքավորումների ու տարբեր գործիքների, սառնարանային տնտեսություն կառուցող ընկերություններին արված հարցումների և շուկայում առկա գնային տեղեկատվության ուսումնասիրության հիման վրա:

Այգու և սառնարանային տնտեսության պահպանման ու շահագործման համար նախատեսվումած հիմնական ծախսային հոդվածները ըստ գնահատված արժեքների ներկայացված են ստորև աղյուսակում.

Ծախսային հոդված	2021	2022	2023	2024	2025	2026	2027	2028	2029	2030	2031
Ծառերի էտ և ձևավորում	-	2,692,800	2,827,440	2,968,812	3,117,253	3,273,115	3,436,771	3,608,610	3,789,040	3,978,492	4,177,417
Էտած ճյուղերի հավաքում և հեռացում	-	1,960,000	2,058,000	2,160,900	2,268,945	2,382,392	2,501,512	2,626,587	2,757,917	2,895,813	3,040,603
Ոռոգման ջրի վարձ	-	2,252,975	3,254,297	3,417,011	3,587,862	3,767,255	3,955,618	4,153,399	4,361,069	4,579,122	4,808,078
Պարարտանյութեր, թունաքիմիկատներ, բուժանյութեր	-	2,535,740	2,802,660	147,139,650	154,496,633	162,221,464	170,332,537	178,849,164	187,791,622	197,181,204	207,040,264
Բերքահավաք	-	660,000	7,161,000	15,708,000	28,586,250	42,735,000	43,197,000	43,659,000	43,890,000	43,890,000	43,890,000
Փաթեթավորում	-	2,400,000	25,746,000	56,532,000	102,847,500	153,930,000	155,022,000	156,114,000	156,660,000	156,660,000	156,660,000
Աշխատավարձ/այգի	4,008,336	53,880,192	54,957,796	56,056,952	57,178,091	58,321,653	59,488,086	60,677,847	61,891,404	63,129,232	64,391,817
Հողի հարկ	2,100,000	2,205,000	2,315,250	2,431,013	2,552,563	2,680,191	2,814,201	2,954,911	3,102,656	3,257,789	3,420,679
Դիզելային վառելիք	-	1,950,000	2,340,000	2,386,800	2,434,536	2,483,227	2,532,891	2,583,549	2,635,220	2,687,924	2,741,683
Գրասենյակային ծախսեր		200,000	204,000	208,080	212,242	216,486	220,816	225,232	229,737	234,332	239,019
Սառնարանային տնտ. աշխատողների աշխատավարձ		4,216,668	38,508,738	51,021,484	53,572,558	56,251,186	59,063,745	62,016,932	65,117,779	68,373,668	71,792,351
Սառնարանային տնտ. կոմունալ ծախսեր			562,500	590,625	620,156	651,164	683,722	717,908	753,804	791,494	831,069
Փաթեթավորում վերջնական իրացման համար	-	1,651,388	18,201,960	42,422,310	81,743,681	122,202,675	130,386,218	131,780,723	132,477,975	132,477,975	132,477,975
Իրացման տրանսպորտային ծախսեր	-	2,311,943	25,482,744	59,391,234	114,441,154	171,083,745	182,540,705	184,493,012	185,469,165	185,469,165	185,469,165
Այլ ծախսեր	61,083	789,167	1,864,224	2,212,174	3,038,297	3,910,998	4,080,879	4,172,304	4,254,637	4,328,031	4,404,901
Ընդամենը	**6,169,419**	**79,705,872**	**188,286,608**	**444,647,045**	**610,697,720**	**786,110,551**	**820,256,700**	**838,633,179**	**855,182,025**	**869,934,241**	**885,385,019**

Ծառերի էտի, էտած ճյուղերի հավաքման, բերքահավաքի, մրգի տեսակավորման ու փաթեթավորման աշխատանքները կկազմակերպվեն վարձու աշխատողների միջոցով, իսկ վարձատրությունը կլինի գործավարձային սկզբունքով: Մնացած ծախսերը ամենամյա անհրաժեշտ ծախսեր են, որոնք պետք են այգու և սառնարանի խնամքի ու սպասարկման համար:

Ծախսերի մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունեն պարարտանյութերի, թունաքիմիկատների, բուժանյութերի ծախսերը, փաթեթավորման և իրացման տրանսպորտային ծախսերը:

Ինքնարժեք

Ելնելով բերքատվության ցուցանիշների փոփոխությունից, ըստ տարիների միավոր կեռասի ու խնձորի ինքնարժեքի ցուցանիշները նույնպես կտատանվեն:

Ըստ բերքի տեսակի հաշվարկվել են ինքնարժեքի հետևյալ ցուցանիշերը.

Ինքնարժեք	2022	2023	2024	2025	2026	2027	2028	2029	2030	2031
	4,129.2	540.1	297.6	201.0	161.0	164.9	167.3	169.9	172.7	175.5
		2,463.5	1,328.4	755.0	595.3	454.4	375.8	352.3	360.5	369.0

Սկզբնական տարիներին ինքնարժեքի շատ բարձր մակարդակը պայմանավորված է բերքատվության ցածր ցուցանիշներով: Հաստատուն ծախսերի արդյունավետ բաշխման նպատակով ինքնարժեքի հաշվարկը տարվել է ABC Costing սկզբունքով:

4.5. Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Ծրագրի իրականացման արդյունքում ընկերության համար գնահատված զուտ շահույթի մարժան վերջին տարում կազմում է կազմում է 62.5%:

Ընկերությունը առաջին չորս տարիների ընթացքում կաշխատի վնասով, իսկ հինգերերորդ տարվանից հետո կունենա արդեն շահույթ՝ 11-րդ տարում կուտակելով մոտ 7.8 մլրդ ՀՀ դրամի շահույթ:

Ծախսածածկման կետի հաշվարկներն ըստ հասույթի ցույց են տալիս, որ որպեսզի ընկերությունը կարողանա մնալ զրոյական կետում պետք է ապահովի տարեկան առնվազն 290 մլն ՀՀ դրամի եկամուտ կամ պլանավորվող հասույթի 24%-ը:

Ֆինանսական արդյունքի հաշվետվություն. 2021-2031 թթ.

Անվանում	2021	2022	2023	2024	2025	2026	2027	2028	2029	2030	2031
Մուտքեր հիմնական գործունեությունից	**-**	**23,305,078**	**275,528,750**	**638,323,438**	**1,232,302,148**	**1,829,510,156**	**1,995,135,078**	**2,147,679,844**	**2,272,659,840**	**2,370,296,465**	**2,472,814,921**
Խնձոր	-	23,305,078	248,587,500	581,073,281	1,118,643,750	1,677,965,625	1,771,185,938	1,859,745,234	1,952,732,496	2,050,369,121	2,152,887,577
Կեռաս	-	-	26,941,250	57,250,156	113,658,398	151,544,531	223,949,141	287,934,609	319,927,344	319,927,344	319,927,344
Ինքնարժեք		185,814,055	298,654,512	379,063,375	485,139,453	575,106,335	624,233,618	636,565,476	648,161,281	659,043,841	670,440,789
Համախառն շահույթ (վնաս)	**-**	**(162,508,977)**	**(23,125,762)**	**259,260,063**	**747,162,696**	**1,254,403,822**	**1,370,901,460**	**1,511,114,367**	**1,624,498,559**	**1,711,252,623**	**1,802,374,132**
Համախառն շահութաբերություն		**-697%**	**-8%**	**41%**	**61%**	**69%**	**69%**	**70%**	**71%**	**72%**	**73%**
Վարչական և ընդհանուր այլ ծախսեր	68,353,919	305,400,305	53,564,195	59,673,334	61,748,596	63,927,489	65,463,361	66,983,454	68,560,154	70,196,784	71,909,086
Իրացման ծախսեր	-	2,311,943	25,482,744	59,391,234	114,441,154	171,083,745	182,540,705	184,493,012	185,469,165	185,469,165	185,469,165
Շահույթ մինչև տոկոսներ և հարկեր	**(68,353,919)**	**(470,221,225)**	**(102,172,701)**	**140,195,494**	**570,972,946**	**1,019,392,587**	**1,122,897,395**	**1,259,637,902**	**1,370,469,240**	**1,455,586,674**	**1,544,995,882**
Վարկի տոկոս											
Շահույթ մինչև հարկերը	**(68,353,919)**	**(470,221,225)**	**(102,172,701)**	**140,195,494**	**570,972,946**	**1,019,392,587**	**1,122,897,395**	**1,259,637,902**	**1,370,469,240**	**1,455,586,674**	**1,544,995,882**
Շահութաբերություն մինչև հարկերը		**-2018%**	**-37%**	**22%**	**46%**	**56%**	**56%**	**59%**	**60%**	**61%**	**62%**
Հարկեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	
Զուտ շահույթ	**(68,353,919)**	**(470,221,225)**	**(102,172,701)**	**140,195,494**	**570,972,946**	**1,019,392,587**	**1,122,897,395**	**1,259,637,902**	**1,370,469,240**	**1,455,586,674**	**1,544,995,882**
Զուտ շահութաբերություն		**-2018%**	**-37%**	**22%**	**46%**	**56%**	**56%**	**59%**	**60%**	**61%**	**62%**
Կուտակված զուտ շահույթ ժամանակահատվածի վերջում	**(68,353,919)**	**(538,575,144)**	**(640,747,845)**	**(500,552,351)**	**70,420,595**	**1,089,813,183**	**2,212,710,577**	**3,472,348,479**	**4,842,817,719**	**6,298,404,394**	**7,843,400,275**

Ծախսածածկման վերլուծություն	2021	2022	2023	2024	2025	2026	2027	2028	2029	2030	2031
Համախառն շահույթի մարժա		-697%	-8%	41%	61%	69%	69%	70%	71%	72%	73%
Հաստատուն ծախսեր		307,712,248	79,046,939	119,064,568	176,189,750	235,011,234	248,004,065	251,476,466	254,029,319	255,665,949	257,378,251
Ծախսածածկման կետն ըստ հասույթի		- 44,128,381	- 941,794,010	293,148,523	290,591,338	342,756,800	360,931,566	357,412,350	355,384,883	354,128,950	353,116,907
Պլանավորվող հասույթ/Ծախսածածկման հասույթ		-189%	-342%	46%	24%	19%	18%	17%	16%	15%	14%

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն (ներառյալ ԱԱՀ), 2021-2031 թթ.

ԱՆՎԱՆՈՒՄԸ	2021	2022	2023	2024	2025	2026	2027	2028	2029	2030	2031
ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ											
Մուտքեր հիմնական գործունեությունից	**-**	**23,477,344**	**277,567,500**	**643,046,250**	**1,241,419,922**	**1,843,045,313**	**2,009,900,156**	**2,163,577,500**	**2,289,483,820**	**2,387,842,152**	**2,491,118,400**
Խնձոր	-	23,477,344	250,425,000	585,368,438	1,126,912,500	1,690,368,750	1,784,278,125	1,873,492,031	1,967,166,633	2,065,524,964	2,168,801,213
Կեռաս	-	-	27,142,500	57,677,813	114,507,422	152,676,563	225,622,031	290,085,469	322,317,188	322,317,188	322,317,188
Ելքեր ընթացիկ գործունեությունից	**6,169,419**	**79,705,872**	**188,286,608**	**444,647,045**	**610,697,720**	**786,110,551**	**820,256,700**	**838,633,179**	**855,182,025**	**869,934,241**	**885,385,019**
Ծառերի էտ և ձևավորում	-	2,692,800	2,827,440	2,968,812	3,117,253	3,273,115	3,436,771	3,608,610	3,789,040	3,978,492	4,177,417
Էտած ճյուղերի հավաքում և հեռացում	-	1,960,000	2,058,000	2,160,900	2,268,945	2,382,392	2,501,512	2,626,587	2,757,917	2,895,813	3,040,603
Ոռոգման ջրի վարձ	-	2,252,975	3,254,297	3,417,011	3,587,862	3,767,255	3,955,618	4,153,399	4,361,069	4,579,122	4,808,078
Պարարտանյութեր, թունաքիմիկատներ, բուժմանյութեր	-	2,535,740	2,802,660	147,139,650	154,496,633	162,221,464	170,332,537	178,849,164	187,791,622	197,181,204	207,040,264
Բեղքահավաք	-	660,000	7,161,000	15,708,000	28,586,250	42,735,000	43,197,000	43,659,000	43,890,000	43,890,000	43,890,000
Փաթեթավորում	-	2,400,000	25,746,000	56,532,000	102,847,500	153,930,000	155,022,000	156,114,000	156,660,000	156,660,000	156,660,000
Աշխատավարձ/այգի	4,008,336	53,880,192	54,957,796	56,056,952	57,178,091	58,321,653	59,488,086	60,677,847	61,891,404	63,129,232	64,391,817
Հողի հարկ	2,100,000	2,205,000	2,315,250	2,431,013	2,552,563	2,680,191	2,814,201	2,954,911	3,102,656	3,257,789	3,420,679
Դիզելային վառելիք	-	1,950,000	2,340,000	2,386,800	2,434,536	2,483,227	2,532,891	2,583,549	2,635,220	2,687,924	2,741,683
Գրասենյակային ծախսեր	-	200,000	204,000	208,080	212,242	216,486	220,816	225,232	229,737	234,332	239,019
Սառնարանային տնտ. աշխատողների աշխատավարձ	-	4,216,668	38,508,738	51,021,484	53,572,558	56,251,186	59,063,745	62,016,932	65,117,779	68,373,668	71,792,351
Սառնարանային տնտ. կոմունալ ծախսեր	-	-	562,500	590,625	620,156	651,164	683,722	717,908	753,804	791,494	831,069
Փաթեթավորում վերջնական իրացման համար	-	1,651,388	18,201,960	42,422,310	81,743,681	122,202,675	130,386,218	131,780,723	132,477,975	132,477,975	132,477,975
Իրացման տրանսպորտային ծախսեր	-	2,311,943	25,482,744	59,391,234	114,441,154	171,083,745	182,540,705	184,493,012	185,469,165	185,469,165	185,469,165
Այլ ծախսեր	61,083	789,167	1,864,224	2,212,174	3,038,297	3,910,998	4,080,879	4,172,304	4,254,637	4,328,031	4,404,901
Այլ հարկեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Հաշվեկշիռ հիմնական գործունեությունից	**- 6,169,419**	**- 56,228,528**	**89,280,892**	**198,399,205**	**630,722,202**	**1,056,934,761**	**1,189,643,456**	**1,324,944,321**	**1,434,301,795**	**1,517,907,911**	**1,605,733,381**

ԱՆՎԱՆՈՒՄԸ	2021	2022	2023	2024	2025	2026	2027	2028	2029	2030	2031
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ											
Մուտքեր, այդ թվում	-	-	-	-	-	-	-	-	-	-	
Ներդրումներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	
Ելքեր, այդ թվում	**764,946,000**	**1,940,976,743**	**289,247,057**	**186,042,797**	-	-	-	-	-	-	-
Այգեռնկման աշխատանքներ											
Հողային նախապատրաստական աշխատանքներ*	17,640,000	-	-	-							
Տնկման փոսերի հորատում	38,556,000	-	-	-							
Կաթիլային ոռոգման համակարգ	126,000,000	-	-	-							
Հակակարկտային համակարգ	582,750,000	-	-	-							
Խնձորի տնկիների ձեռքբերում	-	475,161,617	11,879,040	11,879,040							
Կեռասի տնկիների ձեռքբերում	-	101,530,260	2,538,257	2,538,257							
Հողախառնուրդի պատրաստում և տեղափոխում	-	44,064,000	1,101,600	1,101,600							
Ճառատունկ	-	22,032,000	550,800	550,800							
Սարքավորումներ	-	-	-	-							
Տրակտոր	-	72,068,400	-	-							
Խոտհնձիչ	-	6,726,384	-	-							
Պարարտացման, թունաքիմիկատների սարքավորում (пербицидник)	-	4,804,560	-	-							
Սրսկիչ	-	16,815,960	-	-							
Սայլակներ	-	21,620,520	-	-							
Պլատֆորմ	-	72,068,400	-	-							
Բերքահավաքի պայուսակներ	-	480,456	-	-							
Մկրատներ	-	528,502	-	-							
Այլ գործիքներ	-	450,000	-	-							
Գրասենյակային տարածքի կառուցում	-	-	-	-							
Գրասենյակային տարածք	-	16,815,960	-	-							
Սառնարանային տնտեսություն	-	-	-	-							
Սառնարանային տնտեսություն (տարողությունը 3000 տոննա)*	-	1,085,809,725	-	-							
Տեսակավորման հոսքագիծ	-	-	-	169,973,100							
Սպասարկող տարածքի ասֆալտապատում	-	-	2,430,000	-							
Տրանսպորտային միջոցներ	-	-	270,747,360	-							
Հաշվեկշիռ ներդրումային գործունեությունից	**- 764,946,000**	**- 1,940,976,743**	**- 289,247,057**	**- 186,042,797**	-	-	-	-	-	-	

ԱՆՎԱՆՈՒՄԸ	2021	2022	2023	2024	2025	2026	2027	2028	2029	2030	2031
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ											
Մուտքեր, այդ թվում	**1,736,000,000**	**1,340,125,000**	**484,452,860**	**54,929,196**	**68,308,600**	**48,539,328**	**60,710,222**	**62,423,889**	**63,173,006**	**63,994,257**	**64,889,655**
Մուտքեր շահառուներից		1,222,000,000									
Ստացված վարկ	1,736,000,000										
Հարկերից և պետական տուրքերից մուտքեր		118,125,000	484,452,860	54,929,196	68,308,600	48,539,328	60,710,222	62,423,889	63,173,006	63,994,257	64,889,655
Ելքեր, այդ թվում	**-**	**-**	**-**	**-**	**-**	**542,500,000**	**542,500,000**	**651,000,000**	**150,000,000**	**150,000,000**	**150,000,000**
Վարկի մայր գումարի մարում	-	-	-	-	-	542,500,000	542,500,000	651,000,000	-	-	-
Շահառուներից ստացված փոխառությունների մարում									150,000,000	150,000,000	150,000,000
Հաշվեկշիռ ֆինանսական գործունեությունից	**1,736,000,000**	**1,340,125,000**	**484,452,860**	**54,929,196**	**68,308,600**	**- 493,960,672**	**- 481,789,778**	**- 588,576,111**	**- 86,826,994**	**- 86,005,743**	**- 85,110,345**
Դրամական միջոցների մնացորդը ժամանակահատվածի սկզբում	**-**	**964,884,581**	**307,804,309**	**592,291,004**	**659,576,608**	**1,358,607,410**	**1,921,581,500**	**2,629,435,178**	**3,365,803,389**	**4,713,278,190**	**6,145,180,358**
Դրամական միջոցների շարժը ժամանակահատվածի ընթացքում	964,884,581	- 657,080,271	284,486,695	67,285,604	699,030,802	562,974,090	707,853,678	736,368,210	1,347,474,801	1,431,902,168	1,520,623,035
Դրամական միջոցների մնացորդը ժամանակահատվածի վերջում	**964,884,581**	**307,804,309**	**592,291,004**	**659,576,608**	**1,358,607,410**	**1,921,581,500**	**2,629,435,178**	**3,365,803,389**	**4,713,278,190**	**6,145,180,358**	**7,665,803,394**

4.6. Ֆինանսական վերլուծություն

Ընկերության համար ֆինանսական վերլուծությունները տարվել են ըստ տարբեր սցենարային իրավիճակների: Բացի հիմնական սցենարից վերլուծություններ են տարվել նաև ըստ այնպիսի սցենարների, ինչպես՝ վաճառքի գների փոփոխություն, բերքատվության փոփոխություն և ըստ այգու տարածքի փոփոխության (ըստ խնձորի ու կեռասի համար նախատեսված տարածքների բաշխվածության):

Հիմնական, բազային սցենար

Վերոնշյալ ֆինանսական մոդելն ամբողջությամբ կազմված է ըստ հիմնական սցենարի:

Հիմնական սցենարի ենթադրությունների հիման վրա կառուցված ֆինանսական մոդելի համար ստացվել են հետևյալ ֆինանսական ամփոփ ցուցանիշները.

ՀՈԴՎԱԾ	ՑՈՒՑԱՆԻՇ
Նախագծի սկիզբ	2021 թվական
Կանխատեսումների հորիզոն	11 տարի
Ընդամենը ներդրումներ և շրջանառու միջոցներ	3,243,610,544
Ընդամենը հասույթ (1-11 տարիներ)	15,370,478,357
Ընդամենը ծախսեր (1-11 տարիներ)	6,385,008,379
Նախագծի զուտ շահույթ (1-11 տարիներ)	7,843,400,275
Զուտ շահութաբերություն	62.5%
Շահառուներից ակնկալվող գումար	1,222,000,000
Դրամական միջոցների մնացորդը ժամանակաշրջանի վերջում	7,665,803,394
Արդյունավետության ցուցանիշները ներդրողի համար	
Տնտեսական շահութաբերության ցուցանիշ (IRR)	18.5%
Հետգնման տնտեսական ժամանակահատված	7.1

Ընդհանուր առմամբ, հաշվի առնելով գյուղատնտեսական նախագծերի՝ որպես այդպիսին ոչ բարձր շահութաբերությունը, ռիսկայնության բարձր մակարդակը,

ինչպես նաև ներդրումների հետգնման ժամանակահատվածի սովորաբար երկար լինելը, ծրագրի արդյունավետությունն ավելի շատ կարևորվում է դրանից ակնկալվող տնտեսական արդյունքներով:

Այնուամենայնիվ, դիտարկված տարիների համար դրամական հոսքերի զուտ ներկա արժեքը դրական է (ընկերությունը դիտարկված տարիների ընթացքում իր ազատ դրամական միջոցների հաշվին ներդրումների ընդհանուր գումարը փակելուց հետո կապահովի 2.4 մլրդ ՀՀ դրամի լրացուցիչ արժեք), եկամտաբերության ներքին նորմը մեծ է կապիտալի միջին կշռված արժեքից (WACC-ն հաշվվել է 7%)։ Ծրագրի հետգնման ժամկետը գնահատվել է մոտ 7 տարի։

Դիտարկված 11 տարիների ընթացքում ընկերությունը կկուտակի մոտ 7,8 մլրդ ՀՀ դրամի շահույթ՝ 10-րդ տարվանից սկսած աշխատելով արդեն 62. 5% շահութաբերությամբ:

Ֆինանսական ցուցանիշների սահմանումները.

Զուտ ներկա արժեք (NPV)

Դրամական հոսքերի զուտ ներկա արժեքը ցույց է տալիս երեք տարվա ընթացքում ծրագրի արդյունքում ձևավորված դրամական հոսքերի զուտ ներկա արժեքը: Այն ցույց է տալիս ծրագրի արդյունքում ձևավորված հավելյալ արժեքը:

Հետգնման ժամկետ (PP)

Ծրագրի հետգնման ժամկետը իրենից ներկայացնում է որոշակի ժամանակաշրջան, որի ընթացքում կանխատեսված դրամական հոսքերի ամբողջական գումարը հավասարվում է նախնական ներդրումներին:

Եկամտաբերության ներքին նորմ (IRR):

Եկամտաբերության ներքին նորմը՝ (IRR), դիսկոնտի այն դրույքն է, որի դեպքում NPV=0-ի:

Շահութաբերության գործակիցը (PI):

Շահութաբերության գործակիցը հավասար է ապագա կանխատեսված դրամական միջոցների հոսքերի բերված արժեքի և նախնական ներդրումների հարաբերությանը:

5. ՌԻԿՍԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Գյուղատնտեսության ոլորտի և Հայաստանի Հանրապետության առանձնահատկություններով պայմանավորված՝ ռիսկերի կառավարման դժվարությունները բազմազան են: Սակայն, միջազգային փորձը ցույց է տալիս, որ գյուղատնտեսության մեջ նորագույն տեխնոլոգիաների կիրառումը, ռիսկերի կանխարգելման հնարավորությունների ընդլայնումը, միավոր տարածության հաշվով ստացվող եկամտի ավելացումը հնարավորություն են ընձեռում հաղթահարել այդ դժվարությունները:

Գյուղատնտեսական գործունեության հետ կապված ռիսկեր

Տնկիների չորացում

Տնկիների չորացման ռիսկը այս ոլորտում անխուսափելի է:

Այգու կանոնավոր զարգացման, աճի խթանման և իհարկե չորացումից խուսափելու համար իրականացվելու է ծառերի պարարտացում: Բացի այդ պլանավորվում է մինչև 4-րդ տարին թարմացնել տնկիների ֆոնդը՝ դրանց քանակի 2.5%-ի չափով տնկելով նորերը, ինչը նպատակ ունի փոխորինել չորացման հետևանքով վնասված տնկիները նորերով:

Հիվանդություններ

Պտղատու ծառերի հիվանդությունները բազմազան են և կարող են տարբեր դրսևորումներ ունենալ: Յուրաքանչյուր հիվանդություն պահանջում է համապատասխան միջոցառումների իրականացում:

Այս ռիսկի մեղմման ուղղված միջացառումները բխում են ծառատեսակի մոտ հայտնաբերված առաջին նախանշաններից: Սակայն մինչ հիվանդության ի հայտ գալը նման ռիսկից խուսափելու համար անհրաժեշտ է ժամանակին և ճիշտ ձևով իրականացնել, բոլոր այն գործողությունները, որոնք ուղղված են պտուղների սնուցմանը, տնկիի զարգացմանն ու աճեցմանը (ոռոգում, պարարտացում և այլն):

Ընկերությունը պլանավորում է ներգրավել լավ փորձով ու գիտելիքներով գյուղատնտեսներ, ապահովել ծառերի պարբերաբար խնամք թունաքիմիկատներով ու

տարբեր բուժանյութերով: Այգու խնամքի հետ կապված մասնագետների գիտելիքների պարբերաբար թարմացման ու զարգացման նպատակով անհրաժեշտության դեպքում կարող են կազմակերպվել նաև մասնագետների վերապատրաստումներ ընկերության նախաձեռնությամբ:

Պտղաբերության և որակի ապահովման ռիսկ

Պտղատուները սովորաբար մի տարի տալիս են առատ բերք, իսկ հաջորդ տարի՝ քիչ կամ մնում են բոլորովին անբերրի:

Պտղաբերման պարբերականության ռիսկը վերացվելու կամ նվազեցվելու է ծառատեսակները ճիշտ էտելու, միջշարային և մերձբնային տարածությունների մշակման, կանաչ պարարտացման, օրգանական և հանքային պարարտացման, ոռոգման ճիշտ կազմակերպման շնորհիվ:

Բացի դրանից, տնկիների և ստացվող բերքի որակի ապահովման նկատառումներից ելնելով նախատեսվում է տնկիները ներմուծել Իտալիայից, ինչը թեկուզ մատչելիության տեսանկյունից արդյունավետ չէ, սակայն հնարավորություն կտա առավելապես ապահովել ցանկալի քանակի ու որակի բերք:

Բնակլիմայական ռիսկեր

Բնակիլիմայական ռիսկերը ուղղակիերոն կարող են վտանգել բերքատվության մակարդակը: Դրանք են՝

- երաշտ,
- կարկտահարություն,
- ցրտահարություն:

Համաձայն Հայաստանի արտակարգ իրավիճակների նախարարության (ԱԻՆ) տվյալների՝ հանրապետության տարածքի 12%-ը ենթակա է ցրտահարությունների, 15%-ը՝ երաշտի, 17%-ը՝ կարկտահարման: Կան մարզեր, որոնց տարածքները խոցելի են բնակլիմայական վտանգավոր մի քանի տիպի երևույթների նկատմամբ:

Երաշտ

ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության ուղեցույցի համաձայն՝ Հայաստանին բնորոշ և առավել հաճախակի կրկնվող տարերային երևույթներից մեկը

երաշտն է, որը չոր կլիմայի հետևանք է: Հայաստանի տարածքում ուժեղ երաշտներ դիտվում են Արարատյան հարթավայրում: Այն զգալի է նաև Վայոց ձորի և Սյունիքի մարզերի որոշ շրջաններում: Երաշտի հետևանքով բերքի որակն ընկնում է, ավելանում են բույսերի հիվանդությունները:

Երաշտի ռիսկից ապահովագրելու համար ներդրվելու է արհեստական ոռոգման համակարգ: Մասնավորապես կաթիլային ոռոգման միջոցով կապահովվի համապատասխան խոնավություն՝ այդպիսով զերծ պահելով պտղատուներին թերսնումից:

Ցրտահարություն

Հայաստանի բոլոր մարզերը խոցելի են նաև ցրտահարությունների տեսանկյունից: Դրանք հաճախ դիտվում են հանրապետության հովտային գոտիներում՝ Արարատյան հարթավայրում և դրա նախալեռներում, Տավուշում և Սյունիքի հովիտներում: Պտղատու ծառատեսակների հետ կապված հատկապես ռիսկային են գարնանային ցրտահարությունները ծառերի բողբոջման սեզոնում:

Այս առումով իրականացվելու է ծառերի ծխապատում (ծխեցում):

Կարկտահարություն

Հայաստանը նաև համարվում է աշխարհի կարկտավտանգ տարածքներից մեկը: Կարկուտը մեծ վնաս կարող է հասցնել հատկապես պտղատու այգիներին:

Կարկտահարության ռիսկի կանխարգելման միջոցառումների շրջանակում ինտենսիվ այգում անցկանցվելու են կարկտապաշտպան ցանցեր, որոնք գրեթե 100%-ով պաշտպանում են պտուղը ոչ միայն կարկուտից այլև ծաղկման, հասունացման շրջանում քամիների, թռչունների և միջատների բացասական ազդեցությունից:

Իրացման հետ կապված ռիսկեր

Իրացման հետ կապված ռիսկերի խմբում կարող ենք առանձնացնել երկու խոշոր ռիսկեր՝ իրացման շուկայի կենտրոնացվածությունը, այսինքն կախվածությունը ռուսական շուկայից, և արտարժույթի տատանումները:

Քանի որ Հայաստանում ածանցյալ գործիքների շուկան զարգացած չէ արտարժույթի ռիսկը ածանցյալների պայմանագրերով (ինչպես ֆյուչերսներ, օպցիոններ) հեդջավորելու համար, ընկերությունը մշտապես կուսումնասիրի արտարժույթի շուկան՝ բարելավելով իր ֆինանսական կանխատեսումները: Ավելին, ֆիքսված պայմանագրերը կլինեն փոխարժեքի ռիսկերի մեղմացման հիմնական գործոններից մեկը, այդ թվում սահմանելով հատուկ կետերը, որոնք վերաբերում են, օրինակ արտադրանքի առաքման նվազագույն գնին:

Ինչ վերաբերում է իրացման կենտրոնացվածությանը, այս առումով ռիսկը հնարավորինս մեղմվում է սառնարանային տնտեսության առկայությամբ: Տնտեսությունը կառուցվելու է նորագույն լուծուներով, ինչը թույլ կտա բերքը պահպանել մինչև 12 ամիս ժամկետով: Դա ընկերության համար կապահովի որոշակի ճկունություն նոր գործընկերների փնտրման ու համագործակցությունների տեսանկյունից:

Անձնակազմի հետ կապված ռիսկեր

Ինչպես գիտենք, անձնակազմը իր գիտելիքներով ու փորձով ընկերության ամենաթանկ ռեսուրսն է:

Ուստի հատուկ ուշադրություն կդարձվի անձնակազմի վերապատրաստումներին և մասնագիտական հմտությունների շարունակական աճին: Ի լրումն, ընկերությունում կմշակվեն արդյունավետ հաղորդակցման գործիքներ, որոնք թույլ կտան արագ բացահայտել ու լուծել հնարավոր խնդիրները:

Իրավական ռիսկեր

Իրավական ռիսկերը հիմնականում կապված են գործող օրենքների ու կարգավորումների, օտարերկրյա գործընկերների հետ պայմանագրերի ձևերի և համագործակցության համաձայնագրերի հետ: Կարևոր են նաև հարկային փոփոխությունների հետ կապված ռիսկերը (ԱԱՀ վճարման արտոնություններ, գյուղատնտեսական գործունեության ազատում շահութահարկից և նման այլ):

Այս տեսակի ռիսկերը մեղմելու համար ընկերությունը կներգրավի փորձառու իրավաբանական խորհրդատուներ, որոնք պատասխանատու կլինեն բոլոր պայմանագրերի և համաձայնագրերի մանրակրկիտ պատրաստման համար՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությունը:

Հարկերի առումով ՀՀ կառավարության կողմից կատարված բարեփոխումները ու ոլորտի զարգացման նախաձեռնությունները միայն բարենպաստ միջավայր են ապահովում բիզնեսի առախաղացման համար: Ենթադրվում է, որ դրանք կլինեն շարունակական և լրացուցիչ խոչընդոտներ չեն հանդիսական ոլորտի զարգացման համար:

Քաղաքական ռիսկեր

Քաղաքական ռիսկերի խմբում հատկապես կարևոր են երկրի ներքաղաքական և հարևան երկրների հետ արտաքին հարաբերությունների հետ կապված ռիսկերը, քանի որ քաղաքական անհարթությունների պայմաններում դա կարող է ուղղակիորեն անդրադառնալ Ռուսաստանի Դաշնության հետ տնտեսական հարաբերությունների վրա:

Արտաքին հարաբերությունների հետ կապված անհրաժեշտ է հաշվի առնել, որ դա արտաքին, անկառավարելի ռիսկ է և ընկերությանը ոչինչ չի մնում անել ռիսկը ընդունելուց բացի: Իր գործունեությամբ ընկերությունը կձգտի միայն նպաստել երկրի տնտեսական վիճակի բարելավմանը, արտաքին առևտրային հարաբերություններում ներկայանալ որպես վստահելի գործընկեր և ձևավորել կայուն ու վստահելի համբավ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ